

9-23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

Բարգավաճառություն ամբ 25 տարեթա-
րյա օդի ուժի կողմէ եղանակ, սկզբ 15.00
Մ. Ե. ուժութեաբ:

18-8-2004,

ԶԱԳԱՆՅԱՆ ԿԱՐԼԵՆ ԱՐԱՄԻ
(ԿԱՐԼԵՆԵ ԶԱԳԱՆԻ)

ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴԸ
ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՀԻՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (1850-1990րը.)

E.00.02 - «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐԻ ԳԻՏԱԿԱՆ
ԱՍՏԻճանի ՀԱՅՑԱՆ ԱՏԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2004

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՍԱՆ ՀԱՍՏԱՎԵԼ Է ՀՀ ԳԱԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՄՆԵՐ՝

Պատմական գիտությունների դոկտոր
Դ. Ս. Սուրայյան

Պատմական գիտությունների դոկտոր
Ս. Ս. Ստեփանյան

Պատմական գիտությունների դոկտոր
Ա. Պ. Փոլայյան

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝


Խ. Արովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է նոյեմբերի 19-ին, ժամը 13:00
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՂ-ի 006 «Հնդիանոր պատ-
մության» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 375019, Երևան, Մարշալ
Բաղրամյան պող. 24/զ):

Ատենախոսությանը կարեի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
քրաղաքանում:

Սեղմագիրն առարված է 2004 թ. հոկտեմբերի 18-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
Պատմական գիտությունների թեկնածու

 Պ. Ս. Ստեփանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՄ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՍԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.- Ատենախոսությունում առաջին անգամ գի-
տական համակղմանի քննության է ենթարկվում 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-
րդ դարում հայ մտավորականության ներդրած ավանդը քրդական մշակույթի, պատ-
մության, ազգագրության, բանահյուսության, լեզվի, գրականության հարցերի ու-
սումնասիրման ու վերհանման գործում: Հարուստ փաստագրական նյութերի վեր-
հանման առումով աշխատությունը կարող է լրացնել այն բացը, որ տեղ է գտել ինչ-
պես հայկական, այնպես էլ քրդական մշակույթի ու պատմության հարցերի ուսում-
նասիրման գործում:

Սիամաճանակ բացահայտվում և օրյեկտիվորեն վեր են հանվում,
ճշգրտվում որոշ ենթականությունը կողմից հայ-քրդական հարաբերությունների թյու-
րքությունը ուները: Սույն հարցերի լուսաբանմանը նվիրված ուսումնասիրությունը նաև
կյանքի հայ-քրդական մերօրյա կապերի ամրապնդումը:

Թեմայի արդիականության տեսանկյունից ենթերվ՝ պետք է նշել, որ 19-րդ -
դարի երկրորդ կեսին հայ մտավորականության շանքերով ստեղծվեց մի նոր ուղ-
ղություն՝ հայ քրդագիտությունը:¹

Ելնելով ատենախոսության իմնախնդիրներից, բոլոր դիտարկումները ար-
ծարել ենք հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության գաղափարների արտացոլ-
ման տեսանկյունից, այդ իսկ պատճառով սույն ուսումնասիրությունն ունի ոչ միայն
գիտական, այլև քաղաքական կարենոր նշանակություն և արդիական մեծ հնչեղութ-
յուն:

ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱԿԱԳՐԱԿԱՆ ԾՐՁԱՆՆԵՐԸ.-Նպատակ չունենա-
լով տալու քրդական մշակույթի ու քրդագիտության զարգացման պատմական ուղղու-
թյունը վրա հայ մշակույթի ու մտավորականության ներգրածության ու քարերար ազդեցուր-
յան շափական մանրազմին ամրողական լուսաբանում ու վերածությունը, սա-
կայն խորազնին ուսումնասիրության ընթացքում գիտակցելով այդ ազդեցուրյան
հսկայական նշանակությունը քրդական մշակույթի կյանքում, աշխատել ենք հնա-
րավորին գիտական վերլուծություններով կանգ առնել տվյալ ժամանակաշրջանի
կարերագույն հարցերի վրա, որոնք ընդգրկում են 1850-1990 թթ. ժամանակահատ-
վածը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ.-Ելնելով այն պատմական ի-
րողությունից, որ 19-20-րդ դարերում քրդական մշակույթի խթանման գործում ան-
գույնական դեր են ունեցել հայ մտավորականությունը, Հայաստանի կառավարությունը,
նաև նկատի ունենալով, որ քրդական մշակույթը չեր ամբողջանա առանց հայկա-

¹ Տես Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, 1958, Երևան: Խրիմյան հայրիկ,
Ծրագիր քարենողոգման, 1909, Կ. Պոլիս: Ռաֆֆի, Տաճկահայր, 1913, Վիեննա, Երկերի
ժողովածու, հ. 3, 1963, Երևան: Գ. Արծրունի, Թուրքաց հայերի տնտեսական դրույուն, 1894,
Թիֆլիս:

կան բազմահարուստ և բազմաքննույթ աղբյուրների, և որ առ այսօր այդ կարևորագույն հարցը պատշաճ կերպով չի լուսարանվել, ձեռնամուխ եղանք սույն խնդրի գիտական ուսումնասիրությանը:

1. Փորձել ենք վերլուծել սոցիալ-տնտեսական և քաղաքական այն հանգամանքները, որոնք որոշչի նշանակություն են ունեցել հայ մտավորականության կողմից քուրդ ժողովորդի մշակույթի և պատմության հարցերին անդրադառնալու, դրանք ուսումնասիրելու, վերհանելու, լրացնելու գործում:

2. Ենթերվ հայկական բազմաքննույթ աղբյուրներից քաղված նյութերից, կատարված է գիտական մանրազնին վերլուծություն և ուսումնասիրվող խնդիրը ներկայացված է պատմական զարգացումների տեսանկյունից:

3. Խիստ կարևորելով հայկական աղբյուրները, որոնք մինչ մեր ուսումնասիրությունը քրդական մշակույթում անհայտ են եղել կամ՝ թիզ ուսումնասիրված, ընտրելու ու բաղդատել ենք արթերավորները, հատկապես լուսավորությանը ու քրդագիտությանը վերաբերող նյութերը:

4. Հայ մտավորականության գիտական ներդրումը քրդագիտության մեջ անփետիք է, որի հիման վրա էլ ստեղծվել է գիտական նոր ուղղություն՝ հայ քրդագիտությունը: Վերջինն էլ մեզ հնարավորություն է ընձեռել ծզգրիտ մոտեցում ցուցաբերելու ուսումնասիրվող հարցին՝ խճանկորելով և գիտական մշակման ու վերլուծության ներարկելով դրանք:

5. Բացահայտված են քրդական մշակույթի այնպիսի գանձեր, որոնք հայ մտավորականության ջանքերով փրկվել են անհետացումից, կործանումից: Սա ատենախոսության զիմաստը խնդիրներից մենքն է և, պետք է նշել նաև՝ ինչպես հայագիտության, այնպես էլ քրդագիտության բնագավառում առաջին փորձը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ.- Ատենախոսության նպատակն է խորացնելու ու համակողմաններեն լուսարանել հայ մտավորականության ներդրումը քրդական մշակույթի և պատմության ուսումնասիրման գործում:

Սույն հարցերի իրազործան համար ատենախոսի կողմից առաջադրվել են հետևյալ հետազոտական խնդիրները.

1. Ուսումնասիրվել են 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբներին հայկական ու քրդական միջավայրում արձանագրված քաղաքական ու սոցիալական տեղաշարժերը:

2. Թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանում հայ գրականությունն ու մամուն այն հայելին էին, որ ցայտուն կերպով իրենց արտացոլումն էին գտնել հայ-քրդական հարաբերությունները, մշակութային բազմահանգույց և ամուր կապերը: Արձարձվում էին կրթության, կենցաղային և քրդագիտության այլ ոլորտներին առնչվող հարցերը: Ատենախոսն խորացնելու ուսումնասիրել է, վերհանել հայ մտավորականության ծավալուն գործունեությունն այդ ուղղությամբ: Եվ սույն ուսումնասիրությունն այդ իմաստով լրացնում է ինչպես հայ, այնպես էլ քուրդ պատմագիտության մեջ տեղ գտած բացը:

3. Քննության է ներարկված 19-րդ դարի երկրորդ կեսի հայկական հասարակական բաղադրական կազմակերպությունների դերը քրդական մշակույթի և պատ-

մուրյան բնագավառում, որն առ այսօր բացարձակապես չի ուսումնասիրվել: Ներկայացված է այդ կազմակերպությունների հայանպատ աշխատանքների արդյունավետությունը:

4. Քուրդ ժողովորդի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքում մի նոր դրաշրջան բացվեց՝ պայմանավորված Արևելյան Հայաստանի հայ մտավորականության գործունեությամբ և 20-րդ դարի սկզբներին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմամբ, որը հատկապես արտահայտվեց պետական գործնական մուտքացմամբ: Սա մի նոր երևույթ էր ողջ քուրդ ժողովորդի պատմության մեջ և ազգային հարցի լուծման օրինակելի ծրագիր էր:

5. Պատմամշակութային համալիրում շեշտը դնելով քրդական գրականության և արվեստի զարգացման վրա, հարկ է նշել, որ չափազանց մեծ է հայ գրականության ու արվեստի դերը քրդական գրականության ու արվեստի ստեղծման և զարգացման գործում: Ենթերվ այս հարցի կարևորությունից, ատենախոսը փորձել է լրացնալ ու գիտական շրջանառության մեջ դնել դրա շարժադրությունը ու հիմնախնդիրները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱՎԱՐՄ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.- Ուսումնասիրվող հարցն ունի որոշակի կիրառական նշանակություն: Ներկայացված ժամանակաշրջանի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում առավել խորությամբ ընկալելու և լուսարանելու ինչպես քրդական, այնպես էլ հայկական մշակույթները և այդ երկուսի փոխհարաբերությունների ընդլայնումն է:

Եվս մեկ կարևոր հանգամանք ներկայում չափազանց հրատապ ենք համարում հայ-քրդական հարաբերությունների զարգացման ու ամրապնդման անհրաժեշտությունը, որի կարևոր քաղկացուցիք հենց մշակույթի և պատմության ոլորտներում փոխհարաբերությունների ընդլայնումն է:

Սույն ուսումնասիրությունը կարող է որպես ձեռնարկ ծառայել բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես հասուն գասընթացների, այնպես էլ հայ և քուրդ ժողովորդների պատմության դասավանդման համար: Այս կարող է ծառայել որպես աղբյուրագիտական հարուստ նյութերով հագեցած ձեռնարկ:

Աշխատության մեջ ընդգրկված բազում նյութերը, հարցադրությունները կարող են որպես տեսական և գործնական իմֆր ծառայել քուրդ ժողովորդի մշակույթի պատմության ու մամուն աղբյուրության, մարդու իրավունքների պաշտպանության, ազգային ճիշտ քաղաքանացման, ինչպես հայ և քուրդ ժողովորդների կապերի ամրապնդմանն ուղղված յուրահատու մի ծրագիր է:

ՈՒԽՈՒՄԱՍԻՐՎԱԾԻ ԹԵՇԽԱՅԻ ԱՎՋՅՈՒՐՆԵՐԸ.- Հայկական աղբյուրները՝ ժամանակագրությունները, իշխատակությունները, ճանապարհորդական նորերը, արխիվային նյութերը, չափազանց կարևոր նշանակություն ունեն քրդական մշակույթի ու պատմության հարցերի լուսաբանման դիտանկյունից, քանի օգնում են լրացնել այսօր ինչպես քուրդ, այնպես էլ օտարազգի մասնակտների կողմից լիովին չու-

սումնասիրված հարցերը. Այդ աղբյուրները, հավաստի հիմք լինելով, հնարավորություն են ընձևում հաստատելու կամ հերթերու այլ աղբյուրների հաղորդած վկայությունները, ենտևարար քրդական մշակույթի ու քրդագիտական հարցերի հայկական աղբյուրների ժառայությունն անորամալի է:

Այստեղ կարեոր է առանձնացնել հայ պատմագրության ականավոր ներկայացուցիչ Լեռյին, որն իր մի շարք աշխատություններում ուշադրությամբ անդադարձել է քորդ ժողովրդի պատմամշակութային և ընդհանրապես հայ-քրդական առնչությունների հարցին:²

Բազմաթիվ փաստական տվյալներ է ամփոփում Հակոբ Շահբաղյանի «Քիրո-հայ պատմութիւն» աշխատությունը:³ Սույն մենագրությունն ուսումնասիրողին է ներկայացնում պատմական բազմաթիվ փաստեր, որոնք ապացուցում են հայ և քորդ ժողովրդների համատեղ պայքարը օսմանյան մղջավանշային տիրապետության դեմ: Իրավանք պատմաբանի աշքից չեն վրիպել իր ժամանակաշրջանի կարեոր իրադարձությունները, որոնց ականատեսն է եղել ինքը: Դրանք հիմնականում հայ-քրդական հարաբերությունների հարցերն են: Սակայն հեղինակը մասմբ է անդրադառնում երկու բախտակից ժողովորդների մշակութային կապերին, հայ մտավորականության ու մշակույթի դերին ու նշանակությանը:

Բազմաբովանդակ է Ե. Ֆրանզյանի «Ասրբապատական»⁴ աշխատությունը, որում տեղեկություններ կան քրդերի սոցիալ-տնտեսական կյանքի, կենցաղի, պաշտամունքի վերաբերյալ, որոնք կրում են տեղեկատվական բնույթ, այնուամենայնիվ, այնտեղից քաղել ենք որոշ նյութեր:

Հայ-քրդական տնտեսական, կենցաղային, մշակութային և այլ կապերի վերաբերյալ որոշակի փաստագրական նյութեր կան արևմտահայ պատմագիրներ Անդրանիկի «Դերսիմ, ճանապարհորդություն և տեղագրություն», Գ. Երևանյանի «Պատմություն Զարսանչակի հայոց» աշխատություններում:⁵ Սակայն պետք է նշել, որ նրանց շարադրանքը որոշակի ժամանակագրական բնույթ է կրում և զորկ է գիտական մեկնարանություններից:

Հայ և քորդ ժողովորդների միասնական պայքարին, հայ-քրդական հարաբերություններին, կենցաղին, ազգային բարբերին և սովորոյթներին է նվիրված Արշակ Սաֆրատյանի «Քրդերը և Քյորդիստանը» խորագրով արժեքավոր աշխատությունը, որից քաղել ենք մեզ հետաքրքրող նյութեր:⁶

Թեմային առնչվող հարցերի վերաբերյալ դրվագներ են նկարագրված Ս. Եղիազարյանի՝ Հայաստանի քրդերին, առաջին հերթին, Երևանի նահանգի քրդերի կենցաղին ու բարբերին նվիրված ծանրակշիռ աշխատությունն, որը տարիների ըրտնաջան աշխատանքի արդյունք է: Ծիշտ է, մերոդարձանական տեսակետից ունենալով թերություններ, այն յուրաքանչյուր քրդագետի կարող է ծառայել որպես

² Լեռ, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, 1947, էջ 661:

³ Շահբաղյան Յ., Քորո-հայ պատմություն, Կ. Պոլիս, 1911:

⁴ Ֆրանզյան Ե., Ասրբապատական, Թիֆլիս, 1905:

⁵ Անդրանիկ, Դերսիմ, ճանապարհորդություն և տեղագրություն, Թիֆլիս, 1900, Երևանյան Գ., Պատմություն Զարսանչակի հայոց, Բեյրութ, 1956:

⁶ Safrastian A., Kurds and Kurdistan, London, 1948.

անփոխարինելի սկզբնաղյուր և դարձել է մեր ուսումնասիրության կարևորագույն աղբյուրներից մեկը:⁷

Իր մասնակի թերություններով հանդերձ, իշխատակության է արժանի Պ. Լերխի՝ իրանական քրդերին վերաբերող հետազոտությունը, որի էջերում հանդիպում ենք հայ-քրդական կապերին, կենցաղին վերաբերող նյութերի:⁸

Ուսումնասիրվող հարցի վերաբերյալ որոշ նյութեր ենք քաղել Որմիայում Ուսումնասիրվող փոխականացու Վ. Պ. Նիկիտինի «Քրդերը» արժեքավոր աշխատությունից, որի վերջին զվարացում է նաև Հայաստանի Հանրապետության տարածքում քրդերի ու նրանց մշակույթի մի քանի հարցերի մասին: Սակայն անտեսված է հայ մտավորականության դերը քրդական մշակույթում:⁹

Պատմագիտական և քաղաքական տեսակետից, հատկապես հայ և քորդ ժողովորդների հարաբերությունների վերաբերյալ, չափազանց հետաքրքրական տեղեկություններ կան քորդ նշանավոր պատմաբան, պրոֆեսոր Ջեմալ Մազհարի՝ «Քորդիստանը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» արժեքավոր աշխատությունում, որը 1977 թվականին հրատարակվել է Բաղդադում: Սակայն նրա ուսումնասիրման ոլորտից դուրս են մնացել մշակութային հարցերը, հատկապես հայ մտավորականության զործունեությունն այդ ուղղությամբ:

Ավելի առատ, գիտականորեն համակարգված ու մշակված նյութեր կան մերօրյա հայ հեղինակների տարաբնույթ ուսումնասիրություններում:

Հատկապես հետաքրքիր ու բազմաբանդակ փաստերով են հագեցած Վ. Բայրությանի «Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում», Ա. Հաճբարյանի «Երիտրուրերի ազգային ու հողային քաղաքականությունը և աշխատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում», Մ. Հասրաբյանի «Կորդի Տորուն և հովեյառ աշխատությունները»:¹⁰

Ճիշտ է, նրանց ուսումնասիրության ոլորտից դուրս են մնացել հայ մտավորականության ավանդությունը քրդական մշակույթում, սակայն անդրադառնորդ հայ-քրդական հարաբերություններին, Մուրքիայում առկա սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավավակին, միանգամայն օրյեկտիվ ներկայացնել են նաև հայ և քորդ ժողովորդների միասնական պայքարն ու փոխարարերությունները:

Սեղ համար անհամեմատ հետաքրքրական են նաև Կ. Խուլգավերյանի, Կ. Միրզոյի ուսումնասիրությունները,¹¹ որոնցում հեղինակները, խուելով Հայաստանի Հանրապետության ազգային փորբանամուրությունների շրջանում տարվող աշխա-

⁷ Егиазаров С., Краткий этнографический очерк курдов Эреванской губернии, Тифлис, 1891.

⁸ Лерх П., исследование об иранских курдов и их предках северных халдеях, кн. 3, СПБ, 1858.

⁹ Никитин В., Курды, Москва, 1964.

¹⁰ Բայրության Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում, Երևան, 1989, Համբարյան Ա., Երիտրուրերի ազգային ու հողային քաղաքականությունը և աշխատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908-1914 թթ.), Երևան, 1979, Գարսատյան Մ., Курды Турции в новейшее время, Ереван, 1990:

¹¹ Խудавերդյան Կ., Культурная революция в Советской Армении, 1920-1944 ց., Ереван, 1958, Мирзоев Կ., Курды, Малая энциклопедия, Алматы, 2001.

տանքների մասին, որոշ շափով փորձել են անդրադառնալ հայ մտավորականության կողմից քրդական շրջանում տարվող տնտեսական ու մշակութային աշխատանքներին:

Ըուրբ պատմաբան Խ. Չատուն իր «Առվետական Հայաստանի քրդերը (1920-1940 թ.)» (Երևան, 1965) պատմական ակնարկի չորրորդ գլուխը նվիրել է քրդերի կյանքում արձանագրված մշակութային վերափոխումներին: Սակայն նրա տեսադաշտից դուրս են ննացել մշակութային այն հիմնական հարցերը, որոնք արձարձել են հայ մտավորականության գործունեության մեջ:

Հայ և քուրդ ժողովորդների բարեկամական ու ուզմական կապերի, հերոսական հաճատեղ պայքարի մասին կարևոր հիշատակություններ կան ինչպես քրդական, այնպես էլ հայկական հարցերի ավանդապատումների, երաժշտական բանահյուսության մեջ: Այս հարցերին է անդրադարձել պրոֆեսոր Հաջիե Զենիին իր «Հայ և քուրդ ժողովորդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ» (Երևան, 1965) արժեքավոր աշխատության էջերում: Այդ խնդիրն ատենախոսության էջերում անդրադարձել ենք միմիայն մշակութային տեսանկյունից, կանգ առել հարցի պատմական արմատների և շարժադիրների վրա: Քուրդ բանաստեղծ-գրականագետ Զարկյազ Սատոյանն առանձին գրքովկով անդրադարձել է ժամանակակից հայ գրողների կողմից քրդական բանահյուսության մի քանի ննուշների մշակումներին: Սույն աշխատությունից քաղել ենք մեզ հետաքրքրող լրացուցիչ նյութեր: Մեր թեմային առնչվող որոշ նյութեր կան նաև Հ. Զենիի «Ծաղկեփունչ» (Երևան, 1963) գրքում: Հայ-քրդական կենցաղային և ավանդական կապերի վերաբերյալ տեղեկություններ կան Ա. Ավդալի «Անդրկովկասի քրդերի կենցաղը» աշխատությունում (Երևան, 1958):

Հայաստանում առաջին անգամ լույս տեսավ Ն. Մախմուդովի «Քուրդ ժողովորդը» ոստոմասիրությունը (Երևան, 1959), որի վերջին գլուխությունը հեղինակն անդրադարձել է Հայաստանի քրդերի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքին առնչվող մի քանի հարցերի: Սակայն ինչպես սոյն, այնպես էլ վերը նշված քուրդ աշխատություններում չեն բացահայտվում հայ մտավորականության գործունեության դերը, նշանակությունն ու ավանդը քրդական մշակութային կյանքում:

Քրդական մշակությի ընդհանուր պատմության օրգանական մասն է կազմում երաժշտությունը, որին հաճախակի են անդրադարձել հայ մտավորականությանը, ինչպես, օրինակ, մեծանուն Կոմիտասը, և ապացուցել քուրդ ժողովորդի երաժշտական մտածողության բարձր ունակությունը: Այս կապակցությամբ հիշատակները հատկապես հայ անվանի երաժշտագետ Ս. Գասպարյանի «Կոմիտաս» աշխատությունը:¹²

Հետաքրքրի նյութեր է պարունակում նաև քուրդ շնորհալի երաժշտագետ Նուրա Զառարի «Քրդական ժողովրդական երգարվեստը» աշխատությունը:¹³

Քրդական մշակությունը իր վառ արտահայտությունն է գտել նաև բազմաթիվ հայ գրողների ու բանաստեղծների գործերում, որոնք իրենց ստեղծագործությունների նյութը վերցրել են քրդական բանահյուսությունից, այն մշակելով՝ մատուցել հայ և քուրդ ընթերցողներին: Ատենախոսությունում կարևորվում է նրանց դերը, քանի

նման անմիջական գործունեությամբ խթանել են քրդական մշակույթի, գրականության զարգացումը:

Ինչպես հայտնի է, 19-րդ դարի երկրորդ կեսից Արևմտյան Հայաստանում հրատարակական գործը լայն տարածում գտավ և հենց այդ ժամանակ էլ մամուլի էջերը ողողվեցին քուրդ ժողովրդին վերաբերող ամենատարրեր հարցերով: Հիմնվելով այդ հրողության վրա, մենք ատենախոսությունում լայնորեն օգտագործել ենք այդ նյութը:

Բացի վերոհիշյալ գրականությունից և սկզբնաղբյուրներից, մեր առջև դրված խնդիրները քազմակողմանիորեն լուսաբանելու համար օգտվել ենք նաև Երևանի, Սոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի արխիվներում գտնվող համապատասխան նյութերից ու փաստարդերից:

Ատենախոսության համար լրացուցիչ աղյուր են հանդիսացել նաև «Դիվան հայոց պատմության» բազմահատորյալը, «Արմյանսկի վետնիկի» տարրեր թվականների համարները, Մատենադարանում պահված արժեքավոր նյութերը:

Ատենախոսության մեջ առանձին տեղ է հատկացված հայկական, քրդական, ոտսական աղյուրներից քաղված քրդականություններին ու նյութերին, որոնք ներկայացված են ատենախոսության օգտագործված գրականության ցանկում:

ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓՈՐՁԱԾՆՈՒԹՅՈՒՆԸ.- Ատենախոսությունը քննարկել է և պաշտպանության է երաշխափորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության և բուքագիտության բաժնների համատեղ նիստում: Ատենախոսության հիմնադրույթներն ու եզրակացույթները հրատարակել են հեղինակի շորու մենագրություններում, չորս գրքույթներում և բագմարիկ հոդվածներում: Ատենախոսության նյութերը գեկուցվել են ինչպես միջազգային, այնպես էլ Հայաստանի Հանրապետության մի շարք գիտական կոնֆերանսներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.- Ատենախոսությունը բաղկացած է նախարանից, չորս գլուխներից, որոնք բաժանված են ենթագլուխների, ամփոփումից, օգտագործված աղյուրների ու գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը կազմում է 387 է:

ՆԱԽԱԲԱՆԻ մեջ խոսվում է ատենախոսության թեմայի արդիականության, նպատակների ու խնդիրների մասին, հիմնավորվում է աշխատանքի կիրառական նշանակությունը, տրված է օգտագործված աղյուրների և գրականության համառոտ տեսությունը և վերլուծությունը:

ԱՐԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ՝ «ՔՐԴԱԿԱՆ ՍՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒՄԸ ՈՒ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՍՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿՂԲԲԻՆ», բաղկացած է ինքն ենթագլուխներից: Առաջին ենթագլուխներից՝ «Դարերի

¹² Գասպարյան Ս., Կոմիտաս, Երևան, 1969:

¹³ Զառարի Ն., Քրդական ժողովրդական երգարվեստը, Երևան, 1976:

խորից», նվիրված է հայ և քուրդ ժողովուրդների դարավոր հարաբերություններին, որոնք բարիդրաջիական էին: Հայերի ու քուրդի բարեկամությունը նպաստել է նրանց ազգային հոգեբանության և ստվորությունների ընդհանրական գծերի զարգացմանը, և այս ամենը արտացոլվել է երկու ժողովուրդների ազգային մշակույթներում:

Հայ մտավորականությունը դեռևս 6-8-րդ դարերում անդրադարձել է քրդերին:¹⁴ Երկու ժողովուրդների բարեկամության մասին հայ անվանի պատմաբան Լեռն գրել է: «Դարավոր մոտիկ հարաբերությունները, անշոշտ, փոխադարձ ուժեղ ազդեցություն են տարածել երկու ազգությունների միջև, նոյնացնելով նրանց կուլտուրական լյանքի շատ երևոյթներ»:¹⁵

Հայկական մաճուրը, անդրադառնալով հայ-քրդական փոխարաբերություններին, գրել է: «Ոչ մի ժողովուրդ իր ճակատագրով, իր պատմությամբ այնքան չի շաղկապահ հայերու հետ, որքան քուրդ ժողովուրդը: Ներ առասպելական շրջաններին, երբ մարդիկ ժայռերու վրա սեպած տառերով իրենց փառքն ու տիբուրյունը կարծանագրեին, երկու ցեղակիցները իրարու կողքին ապած են անընդհատ»:¹⁶

Հայկական աղբյուրները վկայում են, որ հայ և քուրդ ժողովուրդների միջև եղել են ոչ միայն մշակութային, այլև զիմանցական կապեր դեռևս հին դարերում: Այդ մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում պատմաբան Հակոբ Շահպազյանը:¹⁷ Արևնտյան Հայաստանում տիրող սոցիալ-տնտեսական վատրարագոյն պայմանները, ծանր հարկերը, ֆիզիկական ճնշումներն անխոսափելի էին դարձնում ինչպես հայերի, այնպես էլ քրդերի մեջ խորվություններն ու միասնական զինված ելույթները:¹⁸

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին զնալով էլ ավելի էր ամրապնդվում այդ երկու դրկից ժողովուրդների համագործակցությունը: «Հայրենիք» թիրքը, անդրադառնալով 20-րդ դարի առաջին կեսի քրդական շարժումներին, հայ-քրդական բարեկամական կապերին, գրում է: «Որևէ ատեն քուրդերը այնքան բարեկամական և նոյնիսկ եղբայրական զգացումներ չեն ունեցել հայության հանդեպ, որքան այժմ... Չուրքը ավելի մեծ խանճավառությամբ կը մղել իր գոյամարտը քուրքին դեմ, երբ տեսնի ու կը համոզվի, որ իրեն հետ է ամբողջ հայ ժողովրդի համակրանքը»:¹⁹

Պատմական պարզ իրողություն է, որ սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանները ինձր հանդիսացան վեր հանելու քրդական մշակույթի ու պատմության հարցերը, որոնց ուսումնասիրությամբ լայնորեն սկսեցին զրադիկ հայ մտավորականության լայնախոհ ներկայացուցիչները, բաղաքական, հասարակական կազմակերպությունները, հայկական մամուլ ողողեց քուրդ ժողովրդի մասին բազմապիտի, բազմաբնույթ եղութերով, կորստից փրկելով նրա լավագույն նմուշները, լայն լր-

¹⁴ Աբարյան Բ., Սլուար արմանական անունների մասին, տ. 5, Երևան, 1962, տ. 225-226.

¹⁵ Լեռ, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, 1947, էջ 661:

¹⁶ «Հայրենիք», 1925, 12 սեպտեմբերի, N4064:

¹⁷ Շահպազյան Հ., Քյուրո-հայ պատմություն, Կ. Պոլիս, 1911, էջ 25:

¹⁸ Նոյնի տեղում:

¹⁹ «Հայրենիք», 1930, 9-ը օգոստոսի:

սավորչական գործունեություն ծավալվեց քրդերի մեջ:

ԵՐԿՐՈՐԴ ԵԽԹԱԳՈՂՈՒԽԸ՝ «ՀԱՅ ՍՏԱՎՈՐԱԿԱՍՈՒԹՅԱՆ ԶԵՂՄԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԵԽԹԱԿԱՎԱՆ ՍՄԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՏՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ», նվիրված է հայ մտավորականության ծավալուն գործունեությանը քրդական մշակույթի ու պատմության հարցերի ուսումնասիրման ոլորտում:

Մաշտոցի անվան մատենադարանում պահպանված մի շարք նյութեր վկայում են, որ հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչները դեռ շատ վաղուց զրադիկ են քուրդ ժողովրդի պատմության, բանահյուսության, ազգագրության վերաբերյալ: Մեր դիտարկումների արդյունքում հայտնաբերեցինք, որ Մատենադարանի 7117 համարի տակ զրանցված մի հետաքրքիր վավերագրում պահպանված մի քանի աղոքըները, որոնք գրի են առնվել հայատառ քրդերենով:²⁰ Խակ 737, 8049, 771 ձեռագրերի տակ պահպանված են մի հայատառ քրդերենով:

Քրդական մշակույթի ու պատմության հարցերի նկատմամբ հայ մտավորականության հետաքրքրությունը առավել ցայտորություն կայացած է 19-րդ դարի սկզբներին: Հայ մտավորականության փայլուն ներկայացուցիչներից աշխարհագրական հարցերի շուրջ աղմանակ անդամանակ միջամտության մասին հայության հանդեպ, շրջագայությունների ժամանակ նյութեր է հավաքել նաև քուրդ ժողովրդի ծագման, պատմական, աշխարհագրական հարցերի շուրջ, անդրադարձ հայ-քրդական հարցերություններին, բանահյուսությանը և ազգագրությանը, որոնք նորահյուս փատություն են նրա «Ստորագրություն իին Հայաստանեայց», «Հնախտություն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» արժեքավոր աշխատություններում:²¹

Չուրք ժողովրդի պատմությունն ու մշակույթի ուսումնասիրող ցանկացած որ առանց տարակուսանքի կարող է պնդել, որ քրդական հայ մտավորականության երախտակուսանքի շարքում բացառիկ տեղ ունի հայ նոր զրականության հիմնադիրը, մեծ վիճական, մասնակարծ և լուսավորիչ Խաչատրու Արուլյանը: Արուլյանը 1830 թ. մի քանի անգամ եղել է Սասիսի ստորոտում ապրող քրդերի մոտ, ծանրացել նրանց նիստուկացին, խորացել նրանց պատմության, ազգագրության, հատկապես բանահյուսության հարցերի մեջ և գրել է իր «Քրդեր» և «Եղբիներ» արժեքավոր աշխատություններում:

Արուլյանը հետազայում ամրող երկու ամիս ապրում է քրդերի մեջ: Այդ մասին են վկայում նրա և քուրդ իբրահիմ աղայի վերջին, ինչպես Արուլյանը է նշում, ամենաանոռաց հանդիպումները 1845 թ. դեկտեմբերի 31-ին և 1846 թ. հունվարին: Հայտնի է, որ Արուլյանը գերմանացի ճանապարհորդներ ֆրիդրիխ Պարուսի, Կարլ Կոլիսի, Ֆրիդրիխ Բողենշտելի, Մորից Վագեների, Ավգուստ ֆոն Հակոբաուլդի հետ

²⁰ Մաշտոցի անվան իին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, Մատենադարան, Զեղմարկումների 7117, էջ 144:

²¹ Խնճիճյան Դ., Ստորագրություն իին Հայաստանեայց, 1822, Վենետիկ, էջ 144: Հնախտություն աշխարհագրական Հայաստանեայց, 1835:

որպես ուղեկցող և բարգմանիչ շրջագայել է Արարատյան դաշտում ու նրանց ծանրացրել ինչպես հայ, այնպես էլ քորդ ժողովրդի կենցաղին: Պետք է իրավամբ նշել, որ Արովյանի շնորհիվ էր, որ նշված ճանապարհորդներն իրենց աշխատություններում գրելով Հայաստանի ու հայ ժողովրդի մասին, նաև անդրադարձել են քորդ ժողովրդի պատմությանը, ազգագրությանը, բանահյուսությանը և այլ հարցերի: Այս մասին երախտագիտությամբ է նշում Մորից Վազներն իր «Ուղեգրություն Պարսկաստան և քրդերի երկիրը» խորագրով աշխատությունում. «Պարսկ Արովյանի ձեռնագրերը դրվեցին իմ տրամադրության տակ, ազատորեն օգտվելու պայմանով, և այս ընկած է սոյն ակնարկի հիմքում»:²²

Հայտնի է, որ Արովյանն իր «Քրդեր» և «Եզրիներ» արժեքավոր հետազոտությունը գերմաներեն լեզվով, ձեռագիր վիճակով ուղարկել է Մյունիսեն, որ այն արժանացել է Մորից Վազների բարձր գնահատականին:²³

Սեր պրատումների ընթացքում ի հայու եկալ այս կարևոր հանգամանքը, որ Արովյանը ճանաչված է եղել Կովկասում որպես քրդագետ, հանճնարարություն է ստուգել Կովկասի փոխարքայի գրասենյակից՝ քրդերի մասին գրելու ծավալուն մի աշխատանք, հավանական է նաև այդ հանճնարարությամբ էլ նա իր «Քրդեր» և «Եզրիներ» ուսումնասիրությունը 1946 թ. հանճնում է Կովկասի փոխարքայի գրասենյակ: Սակայն երկու տարի անց, 1848 թ. այն տպագրվում է «Կովկաս» թերթի 46, 47, 49, 50 և 51-րդ համարներում: Յափոր, պետք է նշել, որ թերթը կրծատումներով է տպագրել հոդվածը, դուրս բռնկելով Արովյանի գրառած քրդական բանահյուսության ու ազգագրության մի շարք նյութեր:

Խնդրո առարկա հոդվածը հետազություն ամբողջությամբ բարգմանվում է Զամյանի կողմից և տեղադրվում «Ճանապարհորդություն ի Հայաստանի» խորագրով գրքում (Վիեննա, 1851): Ի դեպ, այդ տեքստը ավելի ընդարձակ է, և պահանջված են քրդական բանահյուսության մի քանի բնագրեր:

Խ. Արովյանի «Քրդեր» և «Եզրիներ» ուսումնասիրությունը գիտական մի նոր խոչոր ներդրում է քրդական մշակույթի և ընդհանրապես քրդագիտության մեջ: Դասում լուսաբանված են արդյուրագիտական մի շարք հարցեր, մասնանշված են դրանց արթեքները և լուծումները:

Նա ոչ միայն «Քրդեր» և «Եզրիներ» ուսումնասիրությունում է անդրադարձել հայ և քորդ ժողովրդների բարեկամությանը, այլև իր մյուս ստեղծագործություններում: Նա առավել ցայտուն արտահայտված է «Վերքում»: Իր բանահավաքչական գործումներում լենքացրում հավաքված նյութերը, որոնց մի մասը պահպանվում է ՀՀ ԳԱԹ արխիվում, Արովյանը հանգում է այն եզրակացության, որ քորդ ժողովրդի հոգու պարզությունը, անկենդությունն ու անմիջականությունը, նրա խոհերմ ու զգացմունքներն են արտահայտվել ժողովրդական բանահյուսության արվեստի ինքնատիպ, գունեղ ոճում: Նա գրում է. «Քրդերի ժողովրդական պոեզիան ապշեցուցիչ ընթացք է ունեցել և հասել է հնարավոր կատարելության: Ամեն մի քորդ, մինչև իսկ քրդունի ի բնե հոգով բանաստեղծ է, նրանք ամենքն էլ իմպուլսիզիայի զարմա-

²² Wagner M. Reise nach Persien und der Lande der Kurden, Bd 1-2, Leipzig, 1852, s.219.
²³ Նոյն տեղում:

նալի շնորհը ունեն»:²⁴

19-րդ դարի երկրորդ կեսի հայ մտավորականության առավել առաջադեմ դեմքերից Տիգրանակերտի հայոց առաջնորդ Սկրտիչ Տիգրանյանը ոչ միայն լուսավորչական լայն աշխատանք է ծավալել քրդերի շրջանում, կազմել առաջին հայատար քրդերն այրենարանը և այլ ծեռնարկներ, այլև գրադիւն է քորդ ժողովրդի պատմության, ազգագրության, բանահյուսության և լեզվի հարցերով, հայեթենից քրդերն բարգմանությամբ:²⁵ Մեր պրատումների ընթացքում ի հայու եկան նրա կողմից քրդերն բարգմանված նոր Կոտակարանը և մի քանի այլ կրոնական գործեր: Տիգրանյանի գործունեությունը քրդական մշակույթում ընդլայնվեց այն ժամանակ, երբ նա համագործակցեց «Մելովի» խմբագիր Հ. Ավաճյանի և «Բարեգործական Արևելյան» ընկերության նախագահ U. Սոնցյան հետ:²⁶ Սկրտիչ Տիգրանյանն այն մեծ լուսավորիչներից էր, ովքեր քրդական մշակույթի պատմության մեջ անցնելի են քողել:

19-րդ դարի հայ հասարակական մտքի ականավոր ներկայացուցիչներից էր «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին, որն իր թերթի էջերը ողողել եր քորդ ժողովրդի պատմության, բանահյուսության, ազգագրության, մշակույթի և այլ հարցերով:²⁷ Քրդական մշակույթի մասին իր առաջին հոդվածում, որը վերնագրել է «Առաջին քայլերը», Գ. Արծրունին կոչ էր անում հայ մտավորականությանը ուսումնասիրել բարեկամ քորդ ժողովրդի անցյալը և հնարավորինս աջակցել հայ-քրդական բարեկամական կապերն էլ ավելի ամրապնդելու գործին:

1902 թ. Արծրունու մահից հետո «Մշակի» մի քանի համարներում տպագրվեց նրա քորդ ժողովրդի կյանքին վերաբերող «Գյուլիկար» խորագրով պիեսը, որը հետազություն տպագրվեց առանձին գրքույղով:²⁸ Սա քրդական դրամատորգիայում առաջին քայլը էր: Հայ-քրդական կապերի, քրդերի մեջ լուսավորություն տարածելու տեսանկյունից ուսանելի է նաև նրա «Ժողորաց հայերի տնտեսական դրույթունը» աշխատությունը:²⁹

Ինչպես Գ. Արծրունու, այնպես էլ «Մշակի» մյուս խմբագիրների՝ U. Զալան-բարի, Առաքելյանի և այլոց օրոք, քրդերի մասին թերթը հանդիս է զայս տարրեր հոդվածներով, ակնարկներով, ճանապարհորդական նորերով ու այլ նյութերով: Սա մեկ անգամ ևս վկայում է հայ մտավորականության հոգաւոր վերաբերմունքի մասին դեպի քորդ ժողովրդի անցյալը ու ներկա մշակույթը ու պատմությունը:

Հայ-քրդական բարեկամական, այդ քվում՝ հատկապես մշակույթին պատմության մեջ իր արժանի ներդրումն ունի հայ լայնախոն մտավորական, մանկավարժ, ազգագրագետ, քրդական մշակույթի անխոնց գործիչ Լազոն (Հակոբ Ղազար)

²⁴ Արովյան Խ., հ. 8, Երևան, 1958, էջ 377:

²⁵ Տիգրանյան Ս., Այրենարան քրդերն և հայերն, «Ալիքանցից գործանշի ու արմանի», Կ. Պոլիս, 1860: Լաստեր լուսատու հրինյալ ի տեր Սկրտիչ վարդապետ Տիգրանյան, Կ. Պոլիս, 1866: Հայերի գործոց ի աշխատությանց Տիգրանյան, Կ. Պոլիս, 1864:

²⁶ Նալբանդյան Ս., Անտիա Երկեր, Ա. Գ. Հովհաննիսյանի մեկնարարությամբ, Երևան-Սոսվիլ, 1935, էջ 465:

²⁷ «Մշակ», 1881, N48:

²⁸ Նոյն տեղում, 1902, N 281-183:

²⁹ Արծրունի Գ., Թուրքաց հայերի տնտեսական դրույթունը, Թիֆլիս, 1894, էջ 16:

զարյանքը»: Արա բազմաճյուղ ու բազմարվանդակ աշխատաքի հետաքրքրական մասն էն կազմում 1890-1893 թթ. Թիֆլիսում լույս տեսած Արա երեք ստեղծագործությունները՝ «Գյուլե», «Ֆերո» և «Խունիսուր», որոնցում նկարագրված է քուրդ ժողովրդի աղջահաւ-տնտեսական ծավաք վիճակը, Արա հերոսական պայքարը Թուրքիայի դեմ: Այդ գործերը հսկեցված են քուրդ ժողովրդի բանահյուսուրյան, ազգագրուրյան լսագույն դրվագներով, որոնք հետինակը առաջին անգամ է դնում շրջանառության մեջ: «Գյուլե» վիպակը 1890 թ. առաջին անգամ տպագրվում է «Տարագ» թիրթի 1890 թ. 6-8-րդ համարներում, իսկ «Ֆերոն»՝ 1892 թ. «Աղրյուրի» և «Տարագի» առանձին-առանձին համարներում, «Խունիսուրը» առանձին գրքով հրատարակվել է 1893 թ. Թիֆլիսում:

Հ. Ղազարյանը նաև լայն լուսավորչական աշխատանք է ծավալել Վրաստանի և Հայաստանի քրդական համայնքներում, կազմել է հայատառ քրդերեն «Ծան» այրեենարանը: Նրա ճշգրիտապես ու գրական գործունեությանը մանրամասն անդրադարձել ենք ատենախոսության տարրեր գլուխներում, որոնք իրենց հարցադրումներով, վերլուծություններով նորահայտություններ էին քրդական ճշգրիտապես:

Հայ քրդագիտության երախտավորներից է պրոֆեսոր Ս. Ա. Եղիազարյանը: Նրա «Համառոտ ազգագրական ակնարկ Երևանի նահանգի քրդերի մասին» ուսերեն արժեքավոր աշխատությունը մի նոր ներդրում է քուրդ ժողովրդի պատմության մեջ:³⁰ Հեղինակը տասներկու տարի ուսումնասիրելով քրդերի պատմությունը, ազգագրությունը և բանահյուսությունը, իր աշխատության մեջ թնարկել է ոչ միայն քրդերի պատմությանը, բարերին, կենցաղին ու հոգևոր ճշակույթին վերաբերող հարցեր, այլև նա առաջիններից էր, որ անդրադասական քրդերի հասարակական կառուցվածքին: Նվիրվելով սույն առանցքային հարցերի ուսումնասիրմանը, նա փորձել է ամենայն ճշգրտությամբ վերլուծել դրանք, բացահայտել քուրդ ժողովրդի պատմության չլուծված հարցեր:

Ասենախոսությունում սոյն աշխատորյան առանցքային հարցերին անդրադառնալուց բացի, նաև նշված է, որ հայ մտավորականությունն ու մամուն այն բարձր են գնահատել և նախաձեռնել են բարզմանել հայերեն, որը ևս մեկ անգամ վկայում է քրդական նշակույրի հանդեպ հայ մոռավորականների ջերմ վերաբերմունքի և բազմակողմանի ուսումնասիրությունների մասին։ Ինչպես նշում է «Նոր դար» թերթը, հայ իրավարակախոս, բարզմանիշ Գ. Բարիխուտարյանը դեռևս վաղուց նախաձեռնել է այն «Արձագանք» թերթի մի բանի համարներում տպագրելու գործը։ Հայտնի են նաև, որ հեղինակը ոռուերեն տեսատր հանձնել է «Նոր դար» թերթի խմբագրությանը, որտեղ այն հատված առ հատված թարգմանվել ու «Ազգագրական, իրավաբանական մի համառոտ նկարագիր Երևանի նահանգի քրդերի» և «Ազգագրական, իրավաբանական մի համառոտ նկարագիր Երևանի նահանգի եղիյների» խորագրերով տպագրվել է թերթի 1889 թ. 104-131-րդ համարներում։

Եղիազարովն իր այս արժեքավոր աշխատանքով բացահայտեց քրդական մշակույթում ու պատմության մեջ բաց բողած մի շարք հարցեր։ Մեր ուսումնասի-

³⁰ Егиазаров С., Краткий этнографический очерк курдов Эреванской губернии, Тифлис, 1891.

բոլոր յունները վկայում են, որ Եղիսաբետը նաև ձեռնամուխ է եղել քրդական այբուբենի ստեղծմանը: Նա արդեն 80-ական թվականներին կազմել էր ինչպես լատինա-տառ, այնպես էլ ուսուատառ այբուբեններ, որոնք էլ ըսդդրվել են իր Վերը նշված աշխատության բառարաններում: Սա ևս ցույր ժողովրդի ճշակույթին հայ տաղանդավոր քրդականի մատուցած մեծ ու շնորհակալ ծառայությունների վկայություններից է:

19-րդ դարի արևմտահայ մտքի ներկայացողիշներից է Մաքրսու Մամուրյանը, որի կը աշխատություններում, հոգվածներում, հատկապես «Հայկական նամականիում», «Ու լեռան մարդը» պատմավեպում բազմարիկ էջեր են նվիրել նաև բուրդ ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանր վիճակին, բուրդ աշխարհիկ և հոգևոր վերնախավի շարագրություններին, հայ-քրդական հարաբերություններին, բացառությունների սոցիալ-տնտեսական ծանր վիճակին, հայ-քրդական կառավարության ներկամիտ քաղաքականության դերը հայ-քրդական գծուությունների հարցում։ Նա գրում է. «Եթե աղքատ ես, պատճառը օսմանական կառավարությունն է, եթե թշվար ես, մողի ես, պատճառը օսմանական կառավարությունն է, եթե տնտեսական, կրթական ու վարչական բոլոր գործերդ հորի դրույթն մեջ են, պատճառը օսմանական կառավարությունն է»:³¹

Նա կոչ էր անում բարեկամական կապեր հաստատել քորդ ժողովրդի հետ, նրանց մեջ լայնորեն լուսավորություն տարածել բացարել քորրական կառավարության մոլի քաղաքականությունը: Նրա անմիջական նախաձեռնությամբ Վասպուրականի ու Դերսիմի մի շարք զավաներում բացվեցին հայկական դպրոցներ: Մամուրյան խորհուրդ էր տալիս հայ մտավորականությանը օգնել քորդ երեխաններին, որպեսզի նրանք հաճախեն դպրոց, ուսում ստանան: ³²

Քրիերի մեջ լուսավորություն տարածելու, նրանց բուքական սարդաստայնից փրկելու զաղափարի ջերմեռանից զատագովներից էր հայ պայծառ մնալավորական խրիմյան հայրիկը: Գարեգին Սրբանձայնից հետ նա եռանդ չի խնայում ամրապնդելու հայ-քրդական համագործակցությունը և մինչև իր կյանքի վերջը հավատարիմ է մնում այդ սուրբ, մարդասիրական, արդարացի տեսակետին:

Այս առքիվ հայկական մամուլը գրում է, որ Խրիմյան հայրիկն իր ներշնչումն ստացել էր Բաղրիման թեկի օրերի հայ և քուրք գործունեությունից: Այսուհետև «Ալիք» թերթը նշում է, թե այս ներշնչանքով էր, որ Խրիմյան հայրիկը առանձին զանքեր բափեց՝ նոր հիմքերի վրա դմտվություն երկու արյունակից ժողովուրդների փոխարարելությունը. «Նա այդ ուղղությամբ սերունդ իսկ պատրաստեց, ափսոս, որ դեռ իր մեծ նպատակը չիրազործված, ինչը արտորվեց և իր գործակիցներից շատերը բանտ նետվեցին, այդ շատերից Սարգիսը, Պետրոսը և Թովմասը, բունավորվելով, եղան հայ և հեղափոխական անդրանիկ զոհերը»:³³

Խորիմյան հայրեկին նպատակներից մեկն էլ հայ այս մտավորականներին աջակցելն էր, ովքեր գրադպատ էին բռոդ ժողովրդի մշակութային հարցերով։ Այդ ողդությամբ նրա մտադրություններին մասին առավել ընդարձակ տեղեկություններ կան Գ. Նորատունյանի և Գ. Մրկանների հայության միջև նամակագրությունների էջերում։³⁴

³¹ «Արևելյան մամուլ», 1881, էջ 226:

³² Սույն տեղում, 1880, էջ 85-86:

³³ «Ալիք», Թեհան, 1946, 15-ը մարտի

³⁴ Դիվան հայոց պատմության, 1915, Թիֆլիս, գիրք Ժ, էջ 345.

Բոլոր աշխատություններում, թեկող սովորական հոդվածներում նա որևէ կերպ անդրադեմ է նաև քուրդ ժողովրդի անցյալ ու ներկա կյանքին, պատվարեր զործ կատարելով քրդերի շրջանում լուսավորություն տարածելու ուղղությամբ: Հաստիանշական է այն հանգամանքը, որ Խրիմյանի օրոր հայ հոգևորականությունն ու հատկապես մտավորականությունն առանձնահատուկ վերաբերունք ունեին քուրդ ժողովրդի ու նրա մշակույթի նկատմամբ: Եվ պատահական չէր, որ քրդերը հասուկ հարգանք էին տածում հայ հոգևորականության, հատկապես Խրիմյան հայրիկի նկատմամբ, որին իրավաճար անվանում էին միլիաքար (սուրբ մարդ):

Քրդական պատմամշակության հարցերը հետաքրքրել են նաև հրապարակախոս, մանկավարժ Ա. Թոխմախյանին: Այդ մասին իր մտորումները նա արտահայտել է հոդվածներում, ակնարկներում, հուշագրություններում, Թիֆլիսի հայ հասարակության համար կարդացած դասախոսություններում: Այս ամենը ի մի քերելով, 1881 թվականին Թիֆլիսում հրատարակվում է «Մասիսի լեռների հարսավային ստորոտները» խորագրով ժողովածուում:³⁵ Սակայն Թոխմախյանին հիմնականում հետաքրքրել են հայ-քրդական փոխարարերությունները: Նա փորձել է ցոյց տալ երկու ժողովուրդների միջև գժուրությունների շարժառիթները, օբյեկտիվորեն բացահայտել դրդապատճառները, վեր հանել քուրքական կառավարության նենգամիտ բաղարականությունը, քուրդ աղաների ու բեգերի շարագործությունները, նրանց միջցեղային կրիզները:³⁶ Նա իրավացիորեն նշում է, որ ոչ քուրդ քուրդ աղաներն ու բեգերն էին համագործակցում քուրքերի հետ: Նա Հուսեյն աղայի օրինակով անդրադառնում էր հայ-քրդական հարաբերությունների դրական պահերին:³⁷

Հայ մեծանուն վիպասան, պատմաբան, հրապարակախոս Շաֆֆու (Հայոր Սելիրյան) զործերը բացառիկ արժեք ունեն ոչ միայն հայ, այլև քուրդ ժողովրդի համար և մի նոր էջ են բացում քրդական մշակույթի ու հայ քրդագիտության բնագավառում առաջարկ:

Մենք հաստատապես միստում ենք որոշ պատմաբանների ու գրականագիտների այն բյուր կարծիքը, թե Շաֆֆին նեղ ազգայնական է եղել: Ծիշտ է, երբեմն նրա ստեղծագործություններում զգացվում է ազգային սահմանափակվածությունը, որն արտահայտվել է քուրդ վերնախավի խժդությունների նկարագրությամբ, սակայն մեր ուսումնասիրությունները մեկ անգամ և հաստատում են, որ Շաֆֆու քուրդ զան այլազգիների նկատմամբ բարեկամական վերաբերմունք արտահայտող կերպարներ, և ամենաէկան այն է, որ նա քուրդ աշխատավոր ժողովրդին համարում է հայ ժողովրդի դրկիցն ու բարեկամը: Նա կոչ է արել լուսավորություն տարածել ճնշված ու հալածված ժողովուրդների, այդ բվում քրդերի մեջ, մատնանշել, որ կրությամբ է հնարավոր հասնել համերաշխության, բարեկամության, ազգային խորականությունների վերացման: Այս գաղափարն արտահայտված է նրա «Կայծեր», «Խոնքը», «Զալլալեին» վեպերում, «Տաճկահայր» խորազնին ուսումնասիրությունը և բազմանույթ հոդվածներում, որոնց գնահատմանը և վերլուծությանն անդրադեմ ենք ատենախոսությունում:

³⁵ Թոխմախյան Ա. Մասիսի լեռների հարսավային ստորոտները, Թիֆլիս, 1900, էջ 101-105:

³⁶ Սույն տեղում, էջ 57:

³⁷ Սույն տեղում:

Ուսումնասիրվող ժամանակահատվածի հայ մտավորականության առաջադեմ զործիչներից են պատմաբաններ Անդրանիկը և Գ. Երևանյանը: Այս տեսակետից առավել արժեքավոր է 1900 թ. Թիֆլիսում հրատարակված Անդրանիկի «Դերսիմ» ճանապարհորդություն և տեղագրություն», 1956 թ. Բեյրութում հրատարակված Գ. Երևանյանի «Պատմություն Զարասմաշակի հայոց» աշխատությունները, որոնք գրված են հավասար փաստերի հիման վրա, կանգ են առնում Դերսիմի ու Զարասմաշակի կիսանկախ զավառների հայերի ու քրդերի սոցալ-տնտեսական վիճակի, հայքրդական հարաբերությունների, քրդական աշխարթների, քուրդ սեյհենների ու տեսեների (քրդական հոգևոր առաջնորդներ - Կ. Չ.) գործունեության իրական հարցերի նկարագրության վրա: Սույն ուսումնասիրությունները Վանի փոխհյուպատոս Ս. Օլիֆերը իրավաճար համարում է քրդական մշակույթի և պատմության մեջ նորահայտությունները, որոնք իրենց մեջ ընդգրկում են խորազնին ու մանրամասն տեղեկությունները:³⁸

Հայ մտավորականության անխոնջ ներկայացուցիչ Երվանդ Լալյանը իր աշխատություններում, հոդվածներում բազմից է անդրադեմ քրդական մշակութին, հատկապես նրան հրապուրել են քուրդ ժողովրդի բանահյուսության գոհարները, ազգագրության հարցերը: Նա այն մտավորականություններից էր, որը ջանայեց հավաքագրելու, ի հայտ բերելու քրդական հերթաքնները, երգերը, վիպերգերը, կրոնական ճոները: Նա իր սույն պրատումները հիմնականում կատարեց Մորսի, Սաւունի, Շիրիմիսի, Վանի քրդական շրջաններում:

Լալյանը հայ-քրդական բանահյուսության, երգ-երաժշտության և այլ հարցերի վերաբերյալ որոշակի եղբակացությունների է հանգում, նշում առանձնահատկությունները, հայ մտավորականությանն առաջարկում առավել խորությամբ ուսումնասիրել քրդական բանահյուսությունը, երաժշտությունը, միատուկացը: Այս ամենն իրենց արժեքագործումն են գտել նրա «Զավախիք բուրմոնք», «Վասպուրական», «Վասպուրական, ազգագրություն, ասորիներ» աշխատություններում:³⁹

Քրդական մշակույթի նկատմամբ Ե. Լալյանի հետաքրքրությունը ավելի ակնհայտորեն է դպրություն այն ժամանակ, երբ նա հիմնադրում է «Ազգագրական հանդես» պարբերականը (1886 թ.), որի տարբեր համարներում տեղ են գտել քուրդ ժողովրդի պատմությանը, բանահյուսությանն ու ազգագրությանը վերաբերող հետաքրքի ու նորահայտ նյութեր: Հայաստանի Մատենադարանի Լալյանի արխիվային ֆոնդում պահպանվում են մի շարք նամակներ՝ ուղղված Էջմիածնի միարանությանը, որոնցում խնդրվում է հայերի ու քրդերի մասին նյութեր ուղարկել իրեն, որոնց մենք մանրամասն անդրադեմ ենք ատենախոսությունում:

Եվ այսպես, հայ մտավորականությունները 19-րդ դարի երկրորդ կեսին, աշխատացնելով իր մշակույթը, զուգահեռաբար բացահայտեց քրդական մշակույթի ուղղության աշխատավոր կեսին տեղում առաջարկությունը խորազնին ուղարկել իրեն, ուղարկությունում:

³⁸ АВГР, (Архив внешней политики России) Ф. п-во в К-пле, 1913, д. 1605, л. 115.

³⁹ Լալյան Ե., Զավախիք բուրմոնք, Թիֆլիս, 1882: Վասպուրական, Թիֆլիս, 1912, Վասպուրական, ազգագրություն, ասորիներ, Թիֆլիս, 1913:

ԵՐՐՈՐԴ ԵՆԹԱԳԼԽՈՒՄ «ԹԱՐԳԱՎԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՋՈՂՈՎՐԴԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՍՍԱՇԱԿՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ», ըննարկվում է քարգամանական գրականության դեբը քրդական մշակույթի ու պատմության հարցերի վերհանման ու ուսումնասիրման բնագավառում, որը սկզբնավորվեց հայ մավրուականության կողմից 19-րդ դարի կեսին Արևմտյան Հայաստանում: Այդ ժամանակահատվածում հայ մտավորականներից շատերն են գրադիտ հայերենից քրդերենից հայերեն բարգմանությամբ:

Սեր պրատումների ընթացքում քրդական մշակույթի պատմության մեջ առաջնա անգամ ի հայու եկան այնպիսի արժեքավոր գործեր, ինչպիսիք են կրոնական գրքերի քրդերեն բարգմանությունները: 19-րդ դարի կեսին հայերենից քրդերեն է բարգմաններ Նոր կտակարանը, որը 1857 թվականին հայերեն տառերով քրդական տարածված կորմանից բարբառով բարգմաններ է Կ. Պոլսում, հրատարակվել Ա. Յ. Պոյաջանի տպարանում: Բաղլացած է 398 էջից: Երերորդ անգամ Նոր կտակարանը հայատառ քրդերենով, 624 էջով հրատարակվել է 1872 թվականին Կ. Պոլսում: Կրկին հայտնի չէ, թե ով է բարգմաններ: Սակայն բազմաթիվ փաստագրական նյութեր վկայում են, որ տվյալ ժամանակաշրջանում կրոնական գրքերի բարգմանություններ, այդ թվում՝ քրդերեն վերոհիշյալ բարգմանությունները, կատարվել են Պոլսում գործող «Աստվածաշնչյան ընկերության» նախաձեռնությամբ: Հետևաբար, այս ընկերության անդամ լինելով, Տիգրանակերտի հոգևոր առաջնորդ Սկրտիչ Տիգրանան այդ շնորհաշատ գործն ինքն է հաճն առել և բարգմաններ իր իսկ ստեղծած քրդերեն հայատառ այրութենով: Քրդերեն հրատարակված երրորդ կրոնական գիրքը Մարենսի ավետարանի առանձին բարգմանությունն է, որը բաղլացած է 148 էջից, լրաց է տեսել 1891 թվականին Ստամբուլում՝ «Ֆնճիլա բայի մահ Յիսուս Քրիստոս քր Մարեն նվիսի» քրդերեն խորագություն: Հայատառ քրդերեն չորրորդ կրոնական գիրքը «Գործը առաքելոցն» է, որը հրատարակվել է 1911 թ. Ստամբուլում, բաղլացած է 138 էջից: Խակ 1934 թվականին Բեյրութում «Տասնմեկ երգ ու շարական է այդ գործանշից» խորագործ հայատառ քրդերենով հրատարակվում է կրոնական երգերի բարգմանությունների մի ժողովածու, որը կազմել է Ղ. Տեր-Ղազարյանը: Երգերը հիմնականուն նվիրված են Քրիստոսին և նրա ծննդյան:

Հայտնի է, որ այդ երգերը առավելապես քրդախոս հայերի համար են բարգմանվել, սակայն պետք է նշել, որ խնդրո առարկա քարգմանությունները խիստ արժեքավոր են և հարուստ նյութ կարող են մատուցել ոչ միայն լեզվաբաններին, այլև գրականությամբ, պատմությամբ գրադարձներին: Դրանք հարուստ են թե՛ իրենց բառապաշտով, թե՛ լեզվամտածողությամբ և կարող են գրական քրդերենի ստեղծման աղբյուր համարվել:

Քրդական մշակույթի պատմության մեջ ուշագրավ ու արժեքավոր են հայ մտավորականության նախաձեռնությամբ այլ լեզուներից կատարված բարգմանությունները, որոնք իմնականում տպագրվել են հայլական պարբերական մամուլում: Այդ նյութերը բոլոր ժողովրդի մշակույթի արժեքավոր նմուշ լինելոց բացի, միաժամանակ նախատեսում են հայ ընթերցողներ բոլոր ժողովրդի մշակույթին ու պատմության ծանոթացնելու ազնիվ գործին:

Դեռ է նշել, որ նմանատիպ հոդվածների բարգմանության նախաձեռնողը

«Մասյաց աղավնի» ամսագիրն էր, որ 1864 թ. նոյեմբեր ամսվա համարում տպագրել էր անգլիացի ճանապարհորդ Ջոն Մագրոնալդ Ջիների «ճանապարհորդություն Հայաստանում» հոդվածը: Այսուհետև «Փորձ» ամսագրում, «Սեղու Հայաստանի», «Բազմավիճակ», «Արարատ» թերթերում և հայլական այլ պարբերականներում հաճախակի են էջեր տրամադրվում քրդերին վերաբերող բարգմանություններին:

ՉՈՐՐՈՐԴ ԵՆԹԱԳԼԽՈՒՄ վերնագրված է «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՌԱՎԱՔԱԿԱՆ ԿԱԶՍԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՆԴՎ ՔՐԴԱԿԱՆ ՄԵՍԱԿՈՒՅԹԻ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԽԻՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՎԱՌՈՒՄ»:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին հայ ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում նոր ուղիներ քացեցին նաև հայ հասարակական-քաղաքական մտք առջև: Ասպարեզ իշան քաղաքական ու հասարակական կազմակերպությունները, որոնց շուրջ համամարդկային արժեքների որոնման ճանապարհին օրեցօր համախմբվում էին հայ մտավորականության ներկայացուցիչները: Նրանք ունեին նաև մեկ այլ իրատեսական նպատակ՝ դրկից քուրդ ժողովրդի մտավորականներին ներզրակվել իրենց մեջ, գրադիտ քուրդ ժողովրդի մշակույթի ու պատմության հարցերով, լուսավորություն տարածել նրանց մեջ: Սակայն նման գործունեությունն ամենուր հետապնդվում էր արնախում Արդու Համիդի և նրա «զործը» շարունակող երիտրուրերի կողմից: Նման ծանր պայմաններում հայ մտավորականները, նրանց մի շաբաթ զարդնի կազմակերպություններ, մամուլը շիրաժարվեցին իրենց նպատակասալց գործունեությունից:

1880 թ. Արևմտյան Հայաստանի տարրեր զավառներում հայ գործիչների կողմից դարպուներ էին բացվում քրդախոս հայ երեխանների համար, որոնց մեջ ընդգրկվում էին նաև բոլոր երեխանները:⁴⁰

19-րդ դարի 80-ական թվականներին Դիարբերիի զավառում արդեն գործում էին «Դպրոցական արևելյան», «Խիզանի ուսումնասիրաց», և Կ. Պոլսում՝ «Միացյալ» ընկերությունները, որոնք իրենց ծրագրերում նախատեսել էին հայլական ու քրդական զյուղերում քրդախոս հայերի համար դպրոցներ բացել, քուրդ երեխաններին ընդգրկել դրանց մեջ, գրադիտ քուրդ ժողովրդի պատմությամբ, բանահյուսությամբ ու ազգագրությամբ: Այս ընկերություններն իրենց գործունեությունը սկսեցին Սուշի, Բիրլիսի, Ալաշկերտի շրջաններից:⁴¹

Հայ առաջադեմ գործիչներ Գ. Նորատունկյանը, Գարեգին Սրվանձայանը, գործակերպ այդ ընկերությունների հետ, ջանուս են ամրապնդել հայ-քրդական կապերը, գրադիտ քուրդ ժողովրդի մշակույթի ու պատմության հարցերով:⁴² Նման ծրագրի իրագործմանը աջակցում էին հայ մտավորականներ Մ. Մամուրյանը, Հ. Սվաճյանը, Գ. Շիլինկիրյանը և մյուսները:

1880 թ. Քղի բաղաքրում կազմակերպվում է «Ազգանվեր հայությաց» ընկերությունը, որը պետք է զավառներ հայութիների մեջ կրթություն տարածեն: Ընկերությունը չի բավարարվում դրագուստ և ազգագրության մեջ ծանր ծանրապահության մեջ:

⁴⁰ Երևան Հ., Յուշաբան, Վան-Վասպուրական, հ. Ա, էջ 113:

⁴¹ «Մշակ», 1881, N23,24:

⁴² Դիվան Հայոց պատմության, 1915, Թիֆլիս, գ. ԺԳ, էջ 345-346:

վաել լայն լուսավորչական աշխատանք, այդ դպրոցում ընդգրկել նաև քրդուհիներին:⁴³ Նման բարյացկամ մոտեցումը հայ մտավորականության կողմից և ընդհանրապես քուրդ ժողովրդի պատմության մեջ բացառիկ երևոյթ էր:

19-րդ դարի վերջերին Արևմտյան Հայաստանում բացված «Տնտեսական միություն», «Կարմիր Խաչը», «Միացյալ ընկերությունը», «Հայ և քուրդ ազգային ազատագրական կոմիտեն», «Պաշտպան Հայրենիքը», «Հայ հեղափոխականը», «Դպրոցականը» և մյուսներն ունենալու հեռաւտես ծրագրեր՝ համերաշխություն հաստատել քրդերի մեջ, ամրապնդել նրանց բարեկանական կապերը հայ ժողովրդի հետ, լուսավորություն տարածել նրանց շրջանում:

19-րդ դարի վերջերին 20-րդ դարի սկզբներին իր գարքոնքն ապրեց նաև քուրդ մտավորականությունը: Նրանք ջանում էին բոլոր չտալ անցյալի մխաները, էլ ավելի ամրապնդել հայ-քրդական դաշինքը, աջակցել հայկական քաղաքական, հասարակական կազմակերպություններին: Այս ուղղությամբ լայն գործունեություն ծավալեցին Պոլսում կազմակերպված «Քուրդ կրթաց միությունը», «Քուրդ կրթասիրաց և հրատարակչական ընկերությունը», Եգիպտոսում՝ «Քուրդ անկախության կոմիտեն», Թեյրուրում՝ «Խոյրուն» և այլ ընկերություններ: Հայ-քրդական բարեկանության ջատագններից է եղել «Քուրդիստան» թերթի խմբագիր Արդուլուհման Բարբիսը: Թերթը հիմնադրվել է 1898 թ. Կահիրենում և իր էջերում կոչ է անում ամրապնդել հայ-քրդական կապերը:

Տվյալ ժամանակաշրջանում Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը և նրա ականավոր ներկայացուցիչներ Ռուբեն Տեր-Սինասյանը, Կարո Սասունին, Գևորգ Չառչը, Ռոստոմը, Փիլոս, Արմենակը, Հրայրը և մյուսները գործնական նպատակաւաց քայլերի էին դիմում քուրդ ժողովրդին լուսավորելու, հայ-քրդական ուժերը համախմբելու: Եվ պատահական չէր, որ կուսակցության նախաձեռնությանը հրատարակվեց հայատառ քրդերեն այրենարանը, որով դասավանդվում էին քրդախոս հայ և քուրդ երեխաները:⁴⁴

Բայց դաշնակցական մամուլի էջերը ողողված էին քրդերի վերաբերյալ նյութերով: Նրա ներկայացուցիչները բազում անգամներ են հանդես եկել միջազգային կազմակերպություններում ի պաշտպանություն քրդական հարցի արդարացի լուծման:

Ատենախոսությունում անդադարձել ենք Ռուբեն Տեր-Սինասյանի և Կարո Սասունու մի շարք արժեքավոր աշխատություններին, որոնցում լայն տեղ են գտել քուրդ ժողովրդի պատմությանը, բանահյուսությանը, ազգագրությանը և մշակույթին վերաբերող բազում արժեքավոր նյութեր, որոնք նոր են դրվում շրջանառության մեջ:

Հայ-քրդական կապերի ամրապնդման, նրանց մեջ լուսավորություն տարածելու հարցում 19-րդ դարի վերջերին իր գործունեությունը ակտիվացրեց նաև Հնչակյան կուսակցությունը: Նրա ակտիվ գործիչներից Փիլիպոս Ջեշյանը, Փարամազը, Հակոբ Ղազարյանը (Լազոն) և մյուսները դիմում էին գործնական քայլերի:

Հայկական քաղաքական ու հասարակական կազմակերպություններն իրենց

գործունեությամբ խթանեցին հայ-քրդական կապերի ամրապնդումը, ուղիներ հարթեցին քրդական մշակույթի զարգացման համար: Աստիճանաբար հայ մտավորականությունն էլ ավելի խորագին սկսեց զրավիլ ու բացահայտել քուրդ ժողովրդի պատմության, գրականության, բանահյուսության, ազգագրության, լեզվի և մշակույթի այլ հարցեր:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՆԹԱԳՐԱԿԱՆ Վերնագրված է «ՀԱՅ ՍՏԱՎՈՐԱԿԱՆ ՇՈՒԹՅԱՆ ՈՒ ՍԱՍՈՒԼԻՆ ՆՈՐ ԲԱՅԱՀԱՅՑՈՒՄՆԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՄԵՍԱԿՈՒՅԹԻ ՈՒ ՊԱՍՈՒԿԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԵՐԸ ԲԱՍԱՐԱԿԱՆ ԲԱՍԱՐԱԿԱՆ ԱՎԱՎԱՎԱՌՈՒՄ»:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ մտավորականության կողմից քրդական մշակույթի ու պատմության հարցերի առավել զիտական ուսումնասիրման, բացահայտման մի նոր, բեղմնակող ժամանակաշրջան է սկսվում: Այդ նոր փուլում հայ քրդագիտությունը արդեն որոշակիորեն ձևավորվել էր և որպես զիտուրյուն ճանաչում գտել ոչ միայն ողջ Հայաստանում, այլև Եվրոպայում, որը մի նոր քահ հաղորդեց հատկապես քրդական մշակույթի զարգացմանը, ինձ հանդիսացավ հետագայում էլ ավելի խորագին զրավիլ քրդագիտության հարցերով, ինչը և տվեց իր դրական արդյունքները: Հայկական մամուլն իր դրերը բացեց հայ քրդագիտության զարգացման առջև: Նշենք, որ միայն «Մշակ» թերթը իր հիմնադրման օրից ավելի քան 300 հոդվածներով, ակնարկներով, ճանապարհորդական հուշերով և այլ նյութերով է հանդես եկել քուրդ ժողովրդի մասին:⁴⁵

Ուստի է նշել, որ այս շրջանում հայ եկեղեցին ամենուր աջակցում էր հայ մտավորականությանը՝ քուրդ ժողովրդի մեջ լուսավորություն տարածելու, քրդական գյուղերում դպրոցներ բացելու:⁴⁶

20-րդ դարի սկզբին քրդական մշակույթի ջատագններից է եղել «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանքարը, որը հանդիպումներ է ունեցել մի շարք քուրդ մտավորականությունների հետ, նրանց հետ միասին պայքարել ինչպես Արևմտյան Հայաստանում, այսպես էլ Արևմտյան Հայաստանում, հայ-քրդական կապերը ամրապնդելու, քրդերի մեջ լուսավորություն տարածելու համար:⁴⁷

Զալանքարը հաճախակի նորահայտ նյութերով հանդես գալիս իր քերի էջերում, բացահայտում քուրդ ժողովրդի ու պատմության լրասարանված հարցերը:⁴⁸ Ա. Զալանքարի գաղափարակիցն էր «Մշակ» թերթի հրատարակիչ, հրապարակախոս Հ. Առաքելյանը, որը զրավիլ է ոչ միայն հայ-քրդական հարաբերությունների, այլև քուրդ ժողովրդի ազգագրության ու բանահյուսության հարցերով:⁴⁹ Նրա արխիվում, որը պահպանվում է հանրապետության Գրականության և արվեստի բանկայում, կամ մի շարք հետաքրքիր նյութեր քուրդ ժողովրդի մշակույթի ու պատմության հարցերի վերաբերյալ:

⁴³ «Մշակ», 1880, N221:

⁴⁴ «Ազատամարտ», 1909, N51:

⁴⁵ «Մշակ», 1915, N21:

⁴⁶ «Մշակ», 1909, N36-37:

⁴⁷ «Մշակ», 1913, N113:

⁴⁸ «Մշակ», 1907, N104-106:

Քորդ Ժողովրդի մշակութային կյանքում լայն գործունեություն է ծավալել և իր բացարձակ ներդրումն ունի բանահավաք, ազգագրագետ Մարգիս Հայկունին, որի աշխատանքը հատկապես արտացոլված է հայկական պարբերական մանուլում ու «Եմինյան ազգագրական ժողովածուի» Եև Զ հասորընթրում:⁵⁰ Փաստեր վկայում են, որ Հայկունին ստեղծագործական կապերի մեջ է եղել «Եմինյան ազգագրական ժողովածուի» խմբագիր Գ. Խալարյանի հետ, որը և աջակցել է նրան բոլոր ժողովրդի վերաբերյալ նյութերի տպագրման գործում:⁵¹ Հետաքրքիր են Հայկունու արխիվում պահպանված քրդերն և հայերեն լեզուներով գրված քրդական վիճակերպ, հեթիքաբները, պատմվածքները, որոնք նորահայտ նյութեր կարող են մատուցել քրդագիտությամբ գրադիդուներին: Քրդական մշակութային հարցերի գնահատման տեսակետից հետաքրքրական է նաև Ս. Հայկունու «Բազրւկանի ջրարաջին զավառ» աշխատությունը: Այն ուսումնասիրվող ժամանակաշրջանի մասին մի կարևոր աղբյուր է:⁵²

Հայկունո գրառած նյութերը ոչ միայն զիտական տեսանկյունից են արժեքավոր, այլև հիմնված են իրական, ճշմարիտ դեպքերի, իրադարձությունների վրա:

Պետք է նշել, որ Հայկունու մարդասիրական գեղեցիկ ավանդույթներին հավատարիմ մնաց նրա որդին՝ Գուրգեն Հայկունին: Նա իր «Սշեցի Հովհան» պատմվածքում, «Յասում և սեր» վիպակում արտացոլել է քորդ ժողովրդի հերոսական պայքարը բուրքական բռնապետության դեմ, անդրադարձել հայ և քորդ ժողովուրդների բարեկամությանը: Իր ասեղծագործություններում Գ. Հայկունին լայնորեն օգտագործել է քրդական ժողովրդական բանահյուսության ննուշները:

Պատմաքանի հրապարակախոս Ե. Ֆրանցանի տեսադրամից չեն վրիպել քուրդ ժողովրդի ճշակույթին ու պատմությանը վերաբերող այնպիսի հարցեր, որոնք առ այսօր կամ թիշ են ուսումնասիրվել, կամ՝ ճասամբ։ Նա իր հոդվածներում, որոնք իմենականում տպագրվել են «Մոլճ» ամսագրում, անդրադարձել է Պարսկաստանի քրթերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակին, նրանց մշակութային մի շարք հարցերի։⁵³

Ֆրանզյանը հետազայում, ի մի քերելով Պարսկաստանում ապրող հայերի ու քրդերի վերաբերյալ իր ուսումնասիրությունները, գրել է «Ատրպատական» արժեքավոր աշխատությունը:⁵⁴

Չարտնակելով հայ մտավորականության գեղեցիկ ավանդույթները, պատմաբան, ազգագրագետ, մանկավարժ Հմայակ Արամյանցը (Մ. Շփոթ) իր բազմաթիվ հոդվածներում, հասկապես «Ծուրքիայի ընդդիմադիր տարր», «Քորդ բեկը», «Արամը», «Քրիեր Տամկանիայաստանում» աշխատություններում անդրադառնում է հայ-քրդական հարաբերություններին, քրդական շարժումներին։ Նա առանց Վերապահումների, անկեղծորեն անդրադարձել է քրդերի կյանքին։ «Ծնված լինելով Տաճկական Հայաստանի քրդաշատ մի նահանգում (Բալու-Դերսիմ) և 16 անոռուսնակի

բանկազին տարիներ ապրած լինելով թէ՝ ամառանց-յայլաներում, թէ սարերի վրա, թէ՝ պատերազմական վայրերում, անջնջախորեն մեխաված, դրշնված են հիշողության մեջ իմ սիրելի հայրենակից քրդերի կյանքեն բավական բաներ, որոնք գրի առնելու ու առանձին գրքով կը հրատարակեմ ոչ միայն անօգոտ չեմ գտեր, այլև դեռ կվստահեմ ասել, որ ներկա և հետագա աշխատություններս իրենց վերին աստիճանի հավատարմությամբ ու ճշգրտությամբ ծառայելու են որպես պատվական աւտադիմության համար քրդական կյանքը զիտականորեն ուսումնասիրողների համար»:⁵⁵ Արամյանցի սույն զնահատականը քորդ ժորդվիդի մասին բավական է եղակացնելու համար, թէ հայ մտավորականը որքան անկեղծ ու ճշմարիտ նոտեցում ուներ նրա նկատմամբ:

ღրդական մշակույթի ու հատկապես պատմության հարցերի ուսումնասիր-ձան ընազավառում իր ուրույն տեղու ունի հայ քրդագետ Հակոբ Շահբազյանը: Նա տարիներ շարունակ զբաղվել է քորդ ժողովրդի պատմության, նրա սոցիալ-տնտեսական վիճակին, քաղաքական կացորդյանը, ազգագործությանը, հայ-քրդական հարաբերություններին վերաբերող հարցերի ուսումնասիրությամբ: Նա իր բոլոր դիտարկումները ներկայացնում է զիտականորեն հիմնավորված, վեր հանում քրդական մշակույթի ու պատմության շրատանակած բազմաթիվ հարցեր, առաջընթացի համար ուղղված հարթում:

Նա իր ողջ ուսումնասիրությունները, որոնք տպագրվում էին հայկական պարբերական մամուլում, ի մի թերեխով՝ 1910 թ. Կ. Պոլսում հրատարակվում է իր «Քիւրդո-հայ պատմութիւն» խորագրով աշխատությունը: Նա ոչշ-ուշով քննության է առել իր ապրած ժամանակը, քննադատաքար օգտագործել այն աշխատությունների տրամադրած տեղեկությունները, որոնք վերաբերում են հայ-քրդական հարաբերություններին, քուրդ ժողովրդի պատմությանը, ազգագրությանը և քանահյուսությանը:

Ամփոփելով և զնահատելով Հակոբ Շահրապյանի ներդրումը քորդ ժողովրդի մշակոյթի ու պատմության բնագավառում, ցանկանում ենք ներդ քերել հայ անվանի գրականագետ, գրող Հ. Սիրոսոն Խոսքը. «Այս մարդը հիվանդություն մը ուներ, կուզեր քրդերեն ուսումնասիրել և ուսումնասիրեց այ՝ «Քրոջ հայ պատմություն» տիտղոս կրող հատորով մը լույս ընծայելով իր պրատումը... Հիմա, եթե տարիներ անցան, Շահրապյանի արժեքը կառնե իմ աչքիս: Ափսոս, որ իր գիրը չունիմ հիմա նոտս, ինչպես պիտի լափեի ես զայն»:⁵⁶

Հայ մտավդրականության առաջադեմ ներկայացուցիչ, Փարիզի «Անահիտ» ամսագրի խմբագրի Արշակ Չոպանյանը հայ և քուրդ ժողովորդների բարեկամության շատագովներից է եղել, քուրդ ժողովորդի պատմության մեջ անշնչելի հետք բողել: «Անահիտի» համարներում քուրդ ժողովորդի պատմությանը, ազգագործյանը, բանահյուսությանը վերաբերող, ըրբերի մեջ լուսափորություն տարածելուն միտված, բազմաթիվ այլ չլուծված հարցեր բացահայտող հոդվածների մի ամբողջ շարք է:

⁵⁰ Էմինյան ազգագրական ժողովածու, 1904, Մոսկվա, հ. Ե, Զ, էջ 71-75:

⁵¹ «ՀԱՅ արխիվ, Ս. Հայկունու ֆոնդ, ձեռագիր N 130:

⁵² Հայկունի Ս., Բազրւանդ ջրաբախչ գավառ, Էջմիածին, 1894:

⁵³ «Унірб», 1904, №№ 5, 6, 10, 11:

⁵⁴ Ֆրանգյան Ե., Ատրպատական, Թիֆլիս, 1905:

⁵⁵ Հայոց Ա. Տ. (Արամ Խանջ Հ.), Քրդերը Տաճկահայատանում, Պետերբուրգ, 1905, էջ 8:

⁵⁶ «Յանս» 1928 16-ր սեպտեմբերի, N 753

տպագրել:⁵⁷ Նա նաև իր քննադատական խոսքն է ուղղել Եվրոպական այն գիտնականներին, ովքեր հայ-քրդական հարաբերությունների հարցում սխալ տեսակետ են ունեցել և ոչ ճիշտ բացատրություններ տվել: Նրա խոսքը հատկապես ուղղված է եղել գերմանացի պատմարան Վոլգմար Պելերին:⁵⁸

Չոպանյանին առանձնապես ոգևորում է հայ-քրդական միասնական պայքարի ուղղի վրա քուրդ մտավորականության հանդիս զալը, քուրդ ժողովրդի ազգային ինքնազիտակցության զարգացումը: Նա իր ամսագրի միջոցով ողջունում է Կահիրեում «Քուրդիստան» թերթի հրատարակումը, այնուեղան արտապում հայ-քրդական հարաբերություններին վերաբերող հողվածները: Նա մնայում ներդրում ունի քուրդ ժողովրդի պատմության ու մշակույթի հարցերի ուսումնասիրման բնագավառում:

Չոպանյանին ժամանակակիցն է հայ պատմարան, հրապարակախոս Արշակ Ալպոյաջանը, որը ևս մեծ նվիրումով գրադիւն է քուրդ ժողովրդի պատմության ու մշակույթի հարցերով: Նա նաև իր քննադատական խոսքն է ուղղել այն ուսումնասիրողներին, ովքեր կարծիք են կազմել և եզրակացություններ արել՝ խեղարյութելով քուրդ ժողովրդի պատմությունը հատկապես հայ-քրդական հարաբերությունների հարցում: Նա քրդերի մեջ լուսավորություն տարածելու գաղափարի շատագովներից էր: Պոլսում կազմակերպված «Հայոց միացյալ ընկերությանը» նա առաջարկում էր լայն հենարավորություններ տալ քրդերին, որպեսզի նրանք հայոց դպրոցներում սովորեն:⁵⁹ Նա բարձր էր գնահատում 80-85 տարի առաջ Սկրտիչ Տիգրանյանի՝ քրդերի մեջ լուսավորություն տարածելու գործունեությունը՝ «Տիգրանյանի պես դառնալ լուսավորիչ քուրդ ժողովրդի մեջ», նրան համարելով «հրաշագործ Տիգրանյան»:⁶⁰

Քրդական դերերեխությունների, հայ-քրդական հարաբերությունների և հատկապես երկու դրվագ ժողովությունների արմատական կապերի մասին հետաքրքրական տղեկություններ կան Արշակ Ալպոյաջանի «Պատմություն Եվրոպիոյ հայոց», «Պատմություն Մալարիոյ հայոց» և «Պատմություն Հայաստանի սահմանների» աշխատություններում:⁶¹

Արշակ Ալպոյաջանի ուսումնասիրությունները լուրջ ներդրումներ են հայ քրդագիտության մեջ, ինչպես նաև նոր էջ են բացում քրդական մշակույթի պատմության առջև:

20-րդ դարի սկզբներին հայ մնավորականության լայնախոհ ներկայացուցիչներից է նաև քուրդ ժողովրդի պատմության ու մշակույթի մեջ իր մեծագույն ավանդը ներդրած Արշակ Սաֆրաստյանը: Լինելով Բիբլիսի անգլիական փոխհյուպատոս, լավատեյակ էր 20-րդ դարի սկզբների քրդական անցուղարձին: Նա

⁵⁷ Տե՛ս Կ. Չաշանի, Հայ պարբերական մամուլը քրդերի մասին (1850-1920 թթ.), 1980, Երևան, էջ 140:

⁵⁸ «Ամահիտ», 1900, Ն 3:

⁵⁹ Մ. Մանշողյան ամվան մատենադարան, Ա. Ալպոյաջանի ֆ. թիվ. 4, վավ. 94:

⁶⁰ Նոյն տեղում:

⁶¹ Ալպոյաջան, «Պատմություն Հայաստանի սահմանների», Կահիրե, 1950: «Պատմություն Եվրոպիոյ հայոց», Կահիրե, 1952: «Պատմություն Մալարիոյ հայոց», Բեյրութ, 1961:

մշտապես գրադիւն է հայ-քրդական հարաբերությունների խնդրով, հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության ներշնչանքով էր իր հողվածներում ու աշխատություններում անդրադառնում այդ հարցին: Այդ տեսակետից հետաքրքրական է նրա «Հայ-քրդական հարաբերությունները» ծավալու հողվածը, որը տպագրվել է «Արևի» մի քանի համարներում:⁶² Նրա «Մեմք և քրդերը», «Ներկայ քրդական ապատամբություններ» և այլ հողվածներ կարևորվում են նորահայտ արժեքավոր նյութերով: Այնուհետև իր հողվածներն ու մտորումներն ամփոփում է 1947 թ. Լոնդոնում հրատարակվող «Kurdi and Kurdistan» («Քրդեր և Հուրդիստան») ծանրակշիռ աշխատությունուն: Նա Օրսֆորդի համալսարանում կայացած արևելյան գաղտնաբառների 15-րդ կոնցրեսում հանդիսանում է եկեղեց «Քրդերի ծագումը և ցեղական կազմությունը» զեկուցումով, որը ևս մեկ անգամ վկայում է քուրդ ժողովրդի մշակույթի ու պատմության մեջ հայ անվանի մտավորականի ներդրման մասին:

Քրդագիտության ստեղծման ու զարգացման, քրդական նշակույթի մի շարք հարցերի, հատկապես բանահյուսության, լեզվի, գրականուրբյան և ուղղագրության ուսումնասիրման գործում մեծ է ակադեմիկոս Հովսեսի Օրբելու դերը: Նա, սկսած 1900 թվականից մինչև իր կյանքի վերջը, այս ուղղությամբ մեծ ու անուրանալի գործունեություն է ծավալել: Նրա ջանքերով Լենինգրադում հիմնվել է քրդագիտության կենտրոն: Նա իր շորջ համախմբելով երիտասարդ քրդագետներին, նոր ուղիներ հարթեց քրդագիտության զարգացման համար:

Եթե 1911-13 թթ. Մորսի զավադի հայկական ազգագրությունն ու բանահյուսությունը ուսումնասիրելու նպատակով ուսասան ակադեմիայի կողմից գործունվում է Արևմտյան Հայաստան, հենց այդ ժամանակ էլ կազ է հաստատում տեղի քրդերի, հատկապես Մորսի զավադի նշանավոր քուրդ Մուրթլա թեկի հետ, որը մեծ աջակցություն է ցույց տալիս Օրբելուն իր գիտական գործերում: Օրբելին սկսում է նաև զրադիւն Մորսի քրդերի բառքանի և ազգագրության հետազոտմանը, նա նաև ձեռնամուխ է լինում ուսու-քրդերեն, քուրդ-ռուսերեն բառարանների կազմմանը, գրի է առնում քրդերեն տերմուն, հավաքում նյութեր քուրդ ժողովրդի ազգագրության, բանահյուսության, լեզվի և այլ հարցերի վերաբերյալ: Նա այդ տեքստերը և ընդհանրապես մի շարք նյութեր գրի է առել հայատառ քրդերենով:

Նրա քուրդ-ռուսերեն բառարանը քրդագիտական լուրջ աշխատություն է: Հայտնի է, որ Մատի նախաձեռնությամբ 1914-15 թթ. երկու անգամ որոշվում է տպագրել այդ բառարանը, սակայն այդ հարցը մնում է անհետելանք: Այդ արժեքավոր բառարանը իրատարակվում է միայն 2002 թ. ՀՀ ԳԱԱ Արևելյան գիտության ինստիտուտի տնօրին, պարփեսուր Հ. Հովհաննիսիանի և նոյն ինստիտուտի կովկասագիտության բաժնի վարիչ, պարփեսուր Պ. Մուրայյանի նախաձեռնությամբ:

Քրդագիտության բազում հարցեր են արտացոլված Հ. Օրբելու «Մորսի բանահյուսությունը և կենցաղը» աշխատության մեջ: Հայտնի է նաև, որ 1914 թ. Մատի և Օրբելու միացյալ ջանքերով Պետերությունի համալսարանի Արևելյան գիտության ֆակուլտետում անց են կացվում քրդերենի դասընթացներ, և հենց այդ ժամանակ էլ Օր-

⁶² «Արև», 1925, 2-ր մայիսի:

բելին կազմում է լատինատառ քրեստոմատիա:⁶³ Օրբելու ներդրումը քրդական մշակույթում բարձր է գնահատվում նաև այն առումով, որ նա իր քննադատական խորսը է ուղղել այն գիտնականներին, որոնք անտեսել են քրդական ինքնատիպ մշակույթը:⁶⁴

Մինչև իր կյանքի վեջը դեկավարելով Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտի քրդագիտական կաբինետը, Օրբելին պատրաստեց մի շարք քրդագետներ, հրատարակեց քրդագիտությանը վերաբերող բազմաթիվ աշխատություններ, որոնք լայն ճանաչում գտան ողջ աշխարհում, հարստացնելով քրդական մշակույթի գանձարանը նորահայտ գործերով:

Հայազգի մեկ այլ խորագետ մտավորական, պատմաբան, մանկավարժ Ստեփան Կանայանը երկար տարիներ ապրելով քրդերի մեջ, լսվատելյակ էր քորդ ժողովրդի բանահյուսությանը, ազգագրությանը: ՀՀ Գրականության և արվեստի բանագարանի արթիվում պահպանվում են նրա ձեռագիր ուսումնասիրությունները, որոնցից արժեքավոր է հատկապես 1901 թ. նրա հեղինակած «Քրդական ազդեցությունը հայոց վեսի վրա» աշխատությունը:⁶⁵ Այս մեծարժեք ուսումնասիրությունում հեղինակն անդրադառնում է հայ-քրդական բանահյուսական փոխազդեցություններին, նաև քրդական մի շարք վիպերգերի, որոնց նմուշները առաջին անգամ ի հայտ են գալիս շնորհիվ Կանայանի պրատուռների, ինչպիսիք են «Քյոր-Օղլու» քրդական պատումը, «Ռուսամ Զալ» հայկական ու քրդական պատումները: Իր լորդ ուսումնասիրությունների հիման վրա Կանայանը հաճակել է այն եզրակացության, որ կորումանցի բարբառը, որով խոսում են «Բալոյի քրդերը», ամենահիմնականն ու ամենատարածվածն է, և հենց այդ բարբառով է նա հայատառ գրի է առել մի շարք քրդական երգեր:

Կանայանը որոշ ուսումնասիրություններ է կատարել քորդ ժողովոյի պատմության բնագավառում, հատկապես անդրադառնալով հայ-քրդական հարաբերություններին: Այս հարցում հետաքրքիր են նրա մի շարք հոդվածները, որոնք տպագրվել են հայկական մամուլում: Նրա «Գտաց աշխարհը» և «Մարաց գավառը» նորահյուսություն են հայ-քրդական հարաբերությունների ուսումնասիրման ոլորտում:⁶⁶ Քրդագիտական առումով հետաքրքրական է Կանայանի «Անհայտ զավարները ին Հայաստանի» աշխատությունը, որը հրատարակվել է 1914 թ. Էջմիածնում, որում բազում նորահայտ նյութերում հատկապես արտացոլված է քորդ ժողովրդի ազգագրությունը:

Խոսելով քրդական պատմության ու մշակույթի մեջ հայ մտավորականության ներդրած ավանդի մասին, չենք կարող շրջանցնել հայ պատմագրության երախտավիրներից Լեոյին: Դեռևս 1870-ական թվականներին Լեռն նպատակադրված է եղել իր ուսումնասիրությունների հիման վրա մի ծավալուն աշխատանք գրել, որը և նրան հաջողվում է: 1897 թվականին Գ. Արծրունու անմիջական միջամտությամբ

⁶³ Орбели И. А., Введение. Памятники эпохи Руставели, Ленинград, 1938, ст. 5.

⁶⁴ Орбели И. А., Восток и Запад в XII-XIII вв., Вопросы истории, 1965, №6, ст. 105-110.

⁶⁵ ՀՀ ԳԱԹ-ի արխիվ, ֆ. 79, գ. 1-ին:

⁶⁶ «Արարատ», 1913, № 4, 67:

«Մշակ» քերթում տպագրվում է նրա «Քրդերը» խորագրով ընկարձակ հոդվածը, իսկ 1911 թ. «Հորիզոննի» 168-րդ համարում տպագրվում է «Իրանի կյանքից» հոդվածը, որը հիմնականում նվիրված էր քրդական անցյալին, սոցիալ-տնտեսական, ազգային սովորույթներին:

Լեոյին խիստ պրտամուն էր քորդ ժողովրդի և հայ-քրդական հարաբերությունների պատմությունը: Այդ թեմայով նա մի քանի անգամ թիվլսում հայ հասարակույթյան համար դասախոսություններ է կարդացել, հայկական մամուլում հանդես եկել հոդվածներով:⁶⁷ Ըստը ժողովրդի պատմության, սոցիալ-տնտեսական վիճակի, հայ-քրդական հարաբերությունների վերաբերյալ բավական նյութեր են ընդգրկված նրա «Անցյալից» և «Հայոց պատմություն» աշխատություններում: Դրանցում առավել հետաքրքրական են այն հարուստ փաստական վկայությունները, որոնք վերաբերում են Հովսեփի Եմինին, Մուշի սր. Կարապետի վանահայր Հովսեփին արքային պատմությունին ու քրդերի միացյալ գործունեությանը:⁶⁸

Եվ այսպիս ատենախոսությունում վեր բարձրացված հարցերը վկայում են, որ 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին հայ առաջադեմ մտավորականության բարյացկամ ջանքերով բացարձակ ներդրումներ արվեցին քորդ ժողովրդի պատմության ու մշակույթի գանձարանում, ուղիներ հարթվեցին քրդագիտական հարցերի հետագա լայն ուսումնասիրման համար, կործանումից փրկվեցին լավագույն նմուշները:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «ԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ՍՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՈՒ ԴԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹՅԻ ԶՄՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ», բաղկացած է չորս ենթագլուխներից, որոնցից առաջինում՝ «Քրդերի ներգաղըր Արևելյան Հայաստան», նշվում է, որ Արևմտյան Հայաստանում թուրքայի լօի տակ հեծող հայ և քորդ ժողովությունները գտնվում էին սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում, ենթարկվում ֆիզիկական ճնշման, որն ինչպես հայ ժողովրդին, այնպես էլ քորդ ժողովրդի մի հատվածին ստիպեց թողնել հայրենի օջախը, բռնել պանդխոսության ցուպը, զարդել ինչպես Արևելյան Հայաստան, այնպես էլ օսուր այլ երկրներ: Այս մասին «Նոր Դար» քերը գրել է, որ բազմաթիվ հայերի հետ քրդերը նազապուրծ լինելով բորբական յարաղանից, զաղթեցին Կովկաս:⁶⁹

Քրդերի գաղթը Արևելյան Հայաստան սկիզբ է առնում 19-րդ դարի սկզբից: Քրդական բազմաթիվ ցեղեր հաստատվեցին Հայաստանում և Աղքաղջանում 1809-1812 թվականների ռուս-բորբական և ռուս-պարսկական պատերազմների ժամանակ: Այսուետև այդ գործընթացը ժամանակ առ ժամանակ շարունակվեց: Պետք է նշել, որ այդ պատերազմների ժամանակ քրդերը միշտ էլ հաւկում են ունեցել դեպի ռուսական բանակը, հաճախ Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու նպա-

⁶⁷ «Հորիզոննի», 1913, N 34:

⁶⁸ Լեռ, Հայոց պատմություն, 2-րդ մաս, 1946, էջ 779-787:

⁶⁹ «Նոր Դար», 1889, N 194:

Այսպես, դեռևս 1807 թ. Պարսկաստանից քուրդ Մահմետ Սեֆի Սուլեյմանը, որն իր տրամադրության տակ ուներ 500-600 քրդական ընտանիքներ, բուրք-պարսկական սահմանում գտնվող ոռոսական քանակի հրամանատար Կոտյարեսկուն խնդրում է քուրդ տակ իր մարտիկներով անցնել ոռոսական տիրապետության տակ և ստանում հավամություն: ⁷⁰ Այդ նույն ժամանակ քրդական Զելեբիների ցեղապետը, որը իր տրամադրության տակ ուներ 1000 ընտանիք, դիմում է ոռոսական հրամանատարությանը, խնդրելով ոռոսական հպատակության տակ առնել: ⁷¹

Ծովորդայից ու Պարսկաստանից Ռուսաստան քրդերի զաղքը լայն թափ է ստանում Գյուլիստանի պայմանագրից հետո: Գնալով քրդերի հակումը դեպի Ռուսաստան ավելի էր ի հայտ գալիս, այդ մասին իրենց հուշերում անդրադարձել են ոռոս մեծ քանաստեղ Ա. Ա. Պուչկինը, Ա. Գրիբոյեդովը, Լ. Ն. Տոլստոյը: ⁷² Պատմական քաղմարիկ տեղեկություններից հանդում ենք այս եզրակացության, որ միայն 1853-56 թթ. պատերազմի ժամանակ 3000 քրդական ընտանիքներ ծովորդայից զաղքել են Ռուսաստան և հիմնականում բնավորվել Արևելյան Հայաստանում: Իսկ 1877-78 թթ. ռուս-բուրքական պատերազմի ժամանակ Բայազետից Արևելյան Հայաստան գաղթեցին 300 հայ և 200 քուրդ ընտանիքներ, բնակություն հաստատելով Երևանի նահանգում: ⁷³

Ի դեպ, Արևելյան Հայաստան քրդերի զաղքը մեծ թափ ստացավ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և դրանից հետո: Արևելյան Հայաստանում քուրդ գյուղացին հովանավորվում էր միայն հայ գյուղացու կողմից: Այս առիթիվ «Նոր Դար» թերքը գրում է. «Ամեն մի հայ տուն, աղքատ թե հարուստ, ընդունում էր գրկարաց իրենց մոտ ապրելու մի քուրդ՝ իր ընտանիքով հանդերձ: Իսկ նրանք էլ իրենց հերթին օգնում էին տեղացիներին (հայերին - Կ. Չ.):»⁷⁴

Սակայն ցարական կառավարությունը ոչ մի օճանակություն ցույց չէր տալիս քրդերին: Արևելյան Հայաստանում բնակվող քրդերը տնտեսական և մշակութային ծանր պայմաններում էին: Ամբողջ Արևելյան Հայաստանում քրդերի համար գոյուրյուն ուներ միայն մեկ պարոց, որը բացվել էր 1902 թ. Զոր գյուղում, և որ հաճախում էին քուրդ աղաների ու քեկերի երեխաները: Միայն հետագայում, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու հետո, մի նոր դարաշրջան բացվեց քրդական համայնքի համար, թե՛ սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման և թե՛ մշակութային կյանքի զարգացման առումով:

ԵՐՐՈՐԴ ԵՆԹԱԳԼՈՒԽՈՒ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋԱԿՈՒԹՅԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔԻ ԿՅԱՆՔՈՒՆ», լուսաբանվում են Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմամբ հայ և քուրդ ժորվիլումների բարեկամության էլ ավելի ամենապարզ համար: ⁷⁵ Հայաստանի կառավարությունը հայ ժորվիլումների կողմէ կատարում էր 1877-78 թթ. ռուս-բուրքական պատերազմում (1877-78 թթ.), Երևան, 1959, էջ 51:

⁷⁰ АКАК, Акты Собрание и издание Кавказской комиссии, т. 3, ст. 443.

⁷¹ Նոյն տեղում:

⁷² Պուչկին Ա. Ա., ճամապարհորդություն դեպի Երզրում, Երևան, 1937: Գրիբոյեդով Ա. Ա., ճամապարհորդական նորեր, Երևան, 1953:

⁷³ Բարպարան Խ., Հայաստան ռուս-բուրքական պատերազմում (1877-78 թթ.), Երևան, 1959, էջ 51:

⁷⁴ «Նոր Դար», 1880, № 30:

զուգահեռ քայլեր ձեռնարկեց քուրդ ժողովրդի տնտեսությունն ապահովելու, նրան հողատարածություն տրամադրելու հարցում: Միաժամանակ անհրաժեշտ ամեն ինչ արդու էր քրդերի մեջ կուլտուր-լուսավորչական աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու համար: «Պրավիդա» թերթը, անդրադառնալով Հայաստանի քրդական համայնքի կյանքին, արդարացիորեն փաստել է. «Երբ 1920 թ. նոյեմբերին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, մի նոր դարաշրջան սկսվեց քուրդ ազգաբնակչության համար»:⁷⁵

Հայաստանի կառավարության առաջին տարիներին 15 զյուղ՝ 6.109 դեմական ընդհանուր հողատարածությամբ, հատկացվեց քրդերին:⁷⁶ Հայաստանում քուրդ ժողովրդի շրջանում սկսեց լայնորեն ծավալվել կուլտուր-լուսավորչական աշխատանք, որը կարելի է բաժանել երեք շրջանների: 1920-30, 1930-46 և 1946-90 թթ.: Այս երեք փուլերում լուրջ գործնական միջոցառումներ ձեռնարկվեցին Հայաստանի քրդական համայնքի մշակութային կյանքում, որոնք լայն արձագանք զուան համայնք քուրդ ժողովրդի մեջ, նոր թափ հաղորդելով նրա մշակույթի, հատկապես զրականության ու քրդագիտության զարգացմանը:

ԵՐՐՈՐԴ ԵՆԹԱԳԼՈՒԽՈՒ «ԴՊՐՈՑԱԿԱՎԱԾ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆԾՈՒՆ», նվիրված է Հայաստանի քրդական բոլոր շրջաններում դպրոցական շինարարության ու լուսավորության տարածման լայն աշխատանքներին: Հայաստանի կառավարության առաջին հոգատար վերաբերմունքը դրսերվեց 1920 թ., երբ քաղմարիկ որը քրդեր տեղավորվեցին Աշտարակի, Լենինականի և այլ որբանցներում: Այստեղ էլ հայ մտավորականները նրանց ուսուցանում էին նաև քրդերն: Այս գործում մեծ ու անգնահատելի աշխատանք է կատարել հայատար քրդերն «Ծամ» այբբենարանի հեղինակ, բոլոր ժողովրդի մշակույթի նվիրյալ հայ մտավորական Լազնի (Հակոբ Ղազարյանը):

Քրդերի շրջանում կուլտուր-լուսավորչական աշխատանքները խթանվեցին 1921 թ. Հայաստանի լուսիոնլատին կից կազմակերպված ազգային փոքրամասնությունների բյուրոյի կողմից: Իսկ Աշտարակի շրջանում քրդախոս հայ մտավորականների անմիջական դեկանարությամբ սկսեցին անցկացվել դասընթացներ: ⁷⁷ Այդ դասընթացներն ավարտած Արամ Մուրադյանը, Նշան և Թագուհի Ռ-տունյանները, Սոլդան Սարգսյանը, Սոլիքատ Սկրտչյանը, Երեմ Այվազյանը և ուրիշներ մեկնեցին քրդական գյուղեր քուրդ երեխանների դասավանդելու: ⁷⁸ Պետք է նշել, որ մինչև 1928 թ. Հայաստանի բոլոր քրդական դպրոցների ուսուցիչները, բացառությամբ մեկներկուած քրդախոս հայ մտավորականներ էին:

Գնալով հանրապետությունում քրդական դպրոցների թիվն ավելանում էր. եթե 1922-23 թթ. ուստարում քրդական դպրոցների թիվը հինգն էր՝ 267 աշակերտով, ապա 1929-30 թթ. ուստարում այս հասավ 14-ի 567 աշակերտով:⁷⁹ Եվ այսպես, տա-

⁷⁵ «Պրավձա», 1934, N 260.

⁷⁶ ՀՀ ՆՊԿ (ՀՀ նորագույն պատմության արխիվ), ֆ. 112, գ. 2, զ. 1466, էջ 64:

⁷⁷ «Խորհրդային Հայաստան», 1921, N 173:

⁷⁸ «Rya taza», 1971, N 27:

⁷⁹ ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 112, գ. 2, զ. 148, էջ 14:

բեցտարի աճում էր քրդական դպրոցների ու աշակերտների թիվը: Ատենախոսության նորահայտություններից է նաև այն, որ առաջինից մինչև տասներորդ դասարանների համար քրդական դասագրքեր կազմողներն ու քարգմանիչները եղել են հայ մտավորականները:

Աստիճանաբար քրդական դպրոցները համարվում էին քորդ մանկավարժներու: Այդ գործին նպաստեցին քորդ ուսուցիչների համար կազմակերպված կոնֆերանսները, մեմնարները և վերապատրաստման դասընթացները: Ծավալուն աշխատանք տարիեց քորդ ժողովրդի մեջ անգրագիտության վերացման համար: 1937 թ. հանրապետությունում արդեն գործում էին 48 տարրական և յորնամյա քրդական դպրոցներ: 1937 թ. հունվարի 1-ի դրույթամբ Ապարանի և Թալինի քրդական գյուղերում 3.960 մարդ ընդունված էր անգրագիտության վերացման խմբակում:⁸⁰

Եվ այսպես, գնալով հանրապետությունում նոր շոնչ էին առնում դպրոցական ու լուսավորչական աշխատանքները, քրդական համայնքում աստիճանաբար վերանում էր անգրագիտությունը:

ՉՈՐՐՈՐԴ ԵՆԹԱԳԼՈՒԽԸ վերնագրված է «ՔՐԴԱԿԱՆ ՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕԶԱԽՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ. ՀԱՅ ՍՏԱՎՈՐԱԿԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԴ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ»: 30-ական թվականներին դպրոցների աճը, քորդ ժողովրդի մեջ անգրագիտության վերացումը նպաստում էր քրդերի հոգեր աշխարհի հարստացմանը, նրանց զարգացման մակարդակի ու գեղարվեստական ճաշակի բարձրացմանը: Այս գործնքներին նոր շոնչ տվեց քրդական գյուղերում խրճիթ-ընթերացարանների բացումը, որոնք իրենց աշխատանքները միաձուլելով դպրոցների հետ, լայն գործունեություն ծավակեցին Հայաստանի քրդական համայնքում: Այսուղ նույնպես ակտիվ էին հայ մտավորականները, քանզի քրդական գյուղերում դեռևս ազգային կադրերի պակաս էր զգացվում:

Եթե մինչև 1932 թ. քրդական գյուղերում գոյուրյուն ունեին ընդամենը երկու խրճիթ-ընթերացարաններ և երկու ակումբ, 1936 թ. արդեն գործում էին 6 խրճիթ-ընթերացարան, 7 գրադարան, 2 ակումբ:⁸¹

Գյուղերում կուլտուր-լուսավորչական աշխատանքներին լայն քափ հաղորդվել քրդական գյուղերում ստեղծվեցին ակումբների: 1937 թ. դեկտեմբերի 31-ին Հայաստանի Կենտգործկոմի նախագահության որոշմամբ հանրապետությունում ստեղծվեցին մի շարք նոր շրջաններ: Ապարանից անջատվեցին բոլոր քրդական գյուղերը և հայկական գյուղերի հետ կազմեցին Ալազագի շրջանը: Եվ հենց այդ նորաստեղծ շրջանի կենտրոնում ստեղծվեց Ալազագի կուլտուրայի տունը: Պատմական նոր երևույթներից էր 1965 թ. այդ կուլտուրայի տանը կից գործող առաջին ժողովրդական համապարանը, որում դասախոսում էին հայ անվանի գիտնականներ:⁸²

1931 թ. հունվարի 1-ին Երևանում քացվեց Անդրկովկասյան քրդական մանկավարժական տեխնիկումը:⁸³ Տեխնիկումի ուսուցիչների մեծամասնությունը քրդա-

խոս հայ մտավորականներ էին: Պետք է իրավամբ նշել տեխնիկումը ոչ միայն պատրաստեց քորդ մանկավարժներ, այլև դարձավ քորդ մտավորականության ստեղծման դարբնոցը:

Պատմական մեծ իրադարձություն էր 1930 թ. Երևանում քրդականության թերթի հիմնադրումը, որը հրատարակվում է առ այսօր: Թերթը մեծ դեր խաղաց և այժմ էլ խաղում է քրդական գրականության, լեզվի և ընդհանուրագության մշակույթի զարգացման ու մասայալիանացման գործում: Թերթի առաջին խմբագիրներն են եղել հայ անվանի գրողներ՝ Հրաչյա Զոշարը, Հարուրյուն Սկրտչյանը, երկար տարիներ աշխատակցել են Ռուբեն Դրամիանից (քարգմանի), Ռենե Մուրայյանը (պատասխանատու քարտուղար), Նորիկ-Հովհաննի Մարգարյանը, Վահան Մուրայյանը, Օֆելյա Ավետիսյանը, Գայանե Հովհաննիսյանը և որիշներ:

Ըուրբ ժողովրդի մշակութային կյանքում աննախադեմ իրադարձություն էր 1934 թ. հունիսի 8-ին Երևանում քացված քրդագիտական համամիութենական առաջին կոնֆերանսը, որին իրենց լայն աջակցությունը ցուցաբերեցին հայ անվանի գիտնականներ, պրոֆեսորներ Ա. Խաչատրյանը, Սելիք-Օհանջանյանը, Արարատ Ղարիբյանը, Գուրգեն Սևակը, Հր. Աճառյանը, Գր. Ղափանցյանը: Խակ Հայաստանի կոմիսիոն Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Ա. Խանջյանը ողջունի հեռագիր ուղարկեց կոնֆերանսի մասնակիցներին: Պետք է երախտագիտությամբ նշել քորդ ժողովրդի ու նրա մշակույթի հանդեպ նրա հոգատար վերաբերմունքի մասին: Նա երկու անգամ եղել է քրդական մանկավարժական տեխնիկումում, քազմից այցելել քրդական գյուղերի:⁸⁴

Կոնֆերանսից հետո նոր քափ հաղորդվեց քրդական ազգային մշակույթի, հատկապես քրդագիտության զարգացմանը: Հայ մտավորականության անմիջական նախաձեռնությամբ նոր ուղղությունը վկայում է 1932 թ. Հայաստանի կուստուրայի պատմության ինստիտուտում հիմնադրվեց քրդագիտական սեկցիա, որը նեկավարում էր պրոֆեսոր Ա. Խաչատրյանը: Նա քացահայտեց ու գիտական հոդի վրա դրեց քորդ ժողովրդի պատմությանը, քանի ազգագրությանը, լեզվին ու գրականությանը վերաբերող քազում:

Հայաստանում քրդագիտական հարցերն էլ ավելի կայուն հիմքերի վրա դրվեցին 1959 թ. հոկտեմբերի 1-ից՝ ՀՀ ԳԱԱ պեղկիդենս Վ. Համբարձումյանի անմիջական նախաձեռնությամբ Արևելագիտության սեկտորում հայ և քորդ գիտնականներից կազմված մի խմբի հիմնադրմանը, որը հետագայում, Արևելագիտության ինստիտուտը ստեղծվեց հետո, վերածվեց քրդագիտական բաժնի: Ինստիտուտի տնօրեններ, ակադեմիկոսներ Ս. Ներսիսյանի, Գ. Մարգարյանի, պրոֆեսորներ Հ. Ինճիկյանի, Ն. Հովհաննիսյանի բարյացկան ու գործնական քայլերի շնորհիվ քրդագիտական հարցերը լայն ճանաչում ստացան Հայաստանից դուրս:

